



ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# Դայաստանի Երիտասարդության ազգային գեկույց



ՄԱՍ I  
(Դեսազուական մաս)



ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# Հայաստանի Երիտարդության ազգային զեկույց

ՄԱՍ I  
(Ռեսազուական մաս)

## National Youth Report of Armenia

Part 1  
Research

## Национальный доклад молодежи Армении

Часть 1  
Исследовательская часть

ԵՐԵՎԱՆ 2011



ՀՏԴ 31 (042.3)

ԳՄԴ 60.5

Հ 247

Խմբագրական խորհուրդ՝

Ա. Պապյան,

Դ. Յայրապետյան, հոգ. գ.թ.,

Ա. Պետրոսյան,

Ս. Մանուկյան, սոց. գ.թ.

Տեխնիկական խմբագիր՝

Գ. Մելիքքելյան

Զեւավորող և էջադրող՝

Ա. Պատվականյան

Հ 247 Յայաստանի Երիտասարդության ազգային գեկույց/ Կազմ.՝ Ա. Պապյան, Դ. Յայրապետյան, Ա. Պետրոսյան, Ս. Մանուկյան - Եր.: ՀՅ սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարություն, Մաս I - հետազոտական մաս, 2011թ. - 104 էջ:

Չափսը՝ 17x23, տպագրությունը՝ օֆսեթ, տպաքանակը՝ 1000 օրինակ:

ՀՅ սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և Երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պատվերով հարցումներն անցկացրել է «Այ Փի էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտը (տնօրեն՝ Դ. Գրիգորյան): Խմբագրման, ծևավորման և տպագրման աշխատանքները կատարվել են «Սիմիլի պրինտ» ՍՊԸ-ի կողմից:

Սույն ձեռնարկն ընդգրկում է Յայաստանի Երիտասարդության ազգային գեկույցի շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտության հիմնական արդյունքները: Ներկայացված են հարցումների տվյալները և դրանց առաջնային վերլուծությունները:

Աշխատանքը նախատեսված է Երիտասարդական կազմակերպությունների, Երիտասարդության խնդիրներով հետաքրքրված փորձագետների, ինչպես նաև Երիտասարդության լայն շրջանակի համար:

Հետազոտությունը հիմնված է հանրային կարծիքի ուսումնասիրության վրա:

Ձեկույցում տրված գնահատականները կարող են չհամընկնել ՀՅ սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարության պաշտոնական դիրքորոշման հետ:

ISBN 978-99941-2-656-9

ՀՏԴ 31 (042.3)

ԳՄԴ 60.5

© ՀՅ սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարություն

© Կազմողների համար

© «Ա Փի էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ



## Հարգելի՝ ընթեցողներ,

Ձեր դատին է ներկայացվում Հայաստանի երիտասարդության ազգային երկրորդ գեկույցը, որի հիմնական ներակատարությունն աջակցելու է երիտասարդական քաղաքականության բնագավառում նոր գիտելիքի վրա հիմնված ծրագրերի մշակման ու իրականացմանը: Այս խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է իրականացնել խորքային վերլուծություններ, բացահայտել երիտասարդների հիմնախնդիրները ծնող պատճառները, գնահատել իրականացված աշխատանքների արդյունավետությունն ու սահմանել համապատասխան ծրագրերի առաջնայնությունները:

Այս տեսանկյունից Հայաստանի երիտասարդության ազգային երկրորդ գեկույցի հրապարակումը կարևոր քայլ է փաստարկված երիտասարդական քաղաքականություն իրականացնելու համար: Ձեկույցն անդրադարձել է երիտասարդների համար կենսական նշանակություն ունեցող մի շարք ոլորտների՝ մշակույթ, կրթություն, զնտունիք, հոգևոր կյանք, գրադարանների գործություն, բանակ, քաղաքական մասնակցություն և այլն:

Ձեկույցում մատնանշվում են երիտասարդ մարդկանց առավել հրատապ հիմնախնդիրները՝ կրթություն և գրադարաններին: Հատկապես շեշտադրվել է այն իրողությունը, որ որակյալ և արդի աշխատաշուկայի պահանջներին համահունչ կրթությունն այլընտրանք չունի: Երիտասարդների գրադարանների լուծումը քննարկվում է մի շարք հետաքրքիր և նորարար տեսանկյուններից՝ մի կողմից՝ որպես խնդիրների կարծ և արդյունավետ լուծման ճանապարհ կարուղվելով համապատասխան գործարար միջավայրի ձևավորումն ու բարելավումը, իսկ մյուս կողմից՝ երիտասարդների տնտեսական մասնակցության խթանումը:

Ձեկույցն ի հայտ բերեց մի շարք կարևորագույն խնդիրներ՝ իրերը բացահայտորեն իրենց անուններով կոչելու, իսկ որոշ դեպքերում (լրացույցի և բազմակողմանի ճշգրտումներից ու հստակեցումներից հետո) նաև դրանց լրտման ուղիները գտնելու հնարավորություն տալով: Միևնույն ժամանակ դիտարկված խնդիրների շարքում կան այնպիսիք, որոնք վերջին տարիների ընթացքում արդեն իսկ եղել են Կառավարության ուշադրության կենտրոնում, և Կառավարությունը որոշակի քայլեր ձեռնարկել է դրանց հաղթահարման ուղղությամբ. խոսքը մասնավորապես վերաբերում է երիտասարդների համար բարենպաստ գործարար միջավայրի ստեղծմանը, Հայաստան Սփյուռք գործարար համաժողովի նախապատրաստնանը և այլն:

Անհրաժեշտ են համարում նաև ընդգծել, որ Հայաստանի երիտասարդության ազգային գեկույցի վերլուծությունը և հանրային լայն քննարկումները ներկայումս մշակման ավարտական փուլում գտնվող «Երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարություն» առավել հասցեական և փաստագրված դարձնելու հնարավորություն կտան:

Անփոփելով խոսք՝ նշեմ, որ Հայաստանի երիտասարդության ազգային գեկույցը երիտասարդական ուսումնասիրությունների հիմնային նշանակությունը մեկն է, որի շուրջ պետք է ծավալվեն առանձին առավել մասնագիտացված և նեղությունագույն ուսումնասիրությունները ու հետազոտությունները: Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կայացումը ՀՀ Կառավարության կողմից ճանաչվել է 2012թ. երիտասարդական քաղաքականության ոլորտի գերակայություններից մեկը: Կատարած այս գեկույցի հրապարակումը և դրան հաջորդող աշխատանքները նոր ընթացք կիսադրդեն այդ խնդիրի լուծմանը՝ որպես խնդիրների կարծ և արդյունավետ լուծման ճանապարհ կարուղվելով համապատասխան գործարար միջավայրի ձևավորումն ու բարելավումը, իսկ մյուս կողմից՝ ապագայի կերտմանը միտված ուսումնասիրության արդյունքները:

**Տիգրան Սարգսյան**  
**ՀՀ վարչապետ**

# Բովանդակություն

Նախաբան .....	6
Մեթոդաբանություն .....	8
Հետազոտության նորածակը և բովանդակությունը .....	8
Ընթացք .....	8
<b>1. Ազգային ինֆություն .....</b>	<b>11</b>
Ո՞վ է հայը .....	12
Առձի՝ որպես հայի նույնականացման դարսադիր դայմանները .....	12
Պատմամված է արդյո՞ք հայոց լեզուն .....	14
Ներհայկական միասնություն .....	14
Սոցիալական տարածությունները հայերի էթնոմշակութային խմբերի միջև .....	14
Կրոն և եկեղեցի .....	19
<b>2. Ընտանիք և կենսագործ .....</b>	<b>23</b>
Վերարտղողական վարժ .....	24
Երեխաների ցանկալի քանակը ընտանիքում .....	24
Ամուսնություններ և ամուսնության վերաբերյալ դիրքորոշումներ .....	26
Զամուսնանալու դասձառները .....	28
Ամուսնացած երիտասարդների օրգանում երեխաներ չղյանավորելու դասձառները .....	30
Ընտանեկան հարաբերություններ .....	31
Ո՞վ դեմք է լինի ընտանիքի գլխավորը .....	31
Կնոջ դերը ընտանիքում և հասարակական գործունեության մեջ .....	33
Կնոջ հասարակական վարժը .....	36
<b>3. Տնտեսական վարժ .....</b>	<b>39</b>
Տնտեսական ակտիվություն .....	40
Ջրաղվածություն և գործազրկություն .....	40
Աշխատանքային կարգավիճակները և չափատեղու դասձառները .....	45
Աշխատավարձեր և հասարակայնութեն ընդունելի կենսամակարդակ .....	46

<b>Բիզնես միջավայր</b> .....	<b>51</b>
Հակվածությունը բիզնեսին .....	51
Բիզնես նախաձեռնելու ռազմավարությունները .....	52
Գերակա աշխատավայրեր .....	52
Դիրքորոշումները Հայաստանի սնէսության, բիզնեսի և բիզնես միջավայրի վերաբերյալ .....	53
<b>4. Քաղաքական մշակույթ</b> .....	<b>57</b>
Քաղաքական մշակույթի հիմնական բնութագրեր .....	58
Քաղաքացիական մասնակցություն .....	64
Ներհանրադեսական սոցիալ-տնտեսական զարգացումների գնահատականներ .....	67
Պետական երիտասարդական ծրագրեր .....	69
Բանակի հետ կապված խնդիրներ .....	70
<b>5. Արտագաղթի դիրքորոշումներ</b> .....	<b>73</b>
Արտասահմանում լինելու փորձը .....	74
Ժամանակավոր արտագաղթի դիրքորոշումներ .....	75
Մշտական բնակության մեկնելու վերաբերյալ դիրքորոշումներ .....	76
<b>6. Կրթություն</b> .....	<b>79</b>
Միջնակարգ կրթություն .....	80
Բարձրագույն կրթություն .....	81
<b>7. Մշակութային ենթասեփական գործություններ</b> .....	<b>83</b>
Հաղորդակցական ումակություններ .....	84
Լեզվամշակութային կողմնորոշումներ .....	84
Տեղեկատվական ռեսուրսներ .....	86
Հաղորդակցական ումակություններ .....	86
Ժամանց .....	91
<b>Аннотация</b> .....	<b>96</b>
<b>Executive Summary</b> .....	<b>101</b>



# Նախաբան

Ժամանակակից հասարակությունների առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը՝ որպես առաջնարարացի գործական, երիտասարդ սերնդի մասնագիտական, հոգևոր-բարոյական և մշակութային դաստիարակությունն է։ Հասարակության տարբեր շերտերի մեջ երիտասարդությունը տարբերվում է իր յուրահատուկ սոցիալական կարգավիճակով, իսկ տարիքային առումով՝ պատանեկությունից դեպի սոցիալական պատասխանատվության փուլի անցնամբ։ Արդի հասարակության մեջ երիտասարդության ընկալումը երկակի բնույթ ունի. մի կողմից՝ իրախուսվում է սոցիալական այս խմբի կայացման գործընթացը, մյուս կողմից՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երիտասարդության ակտիվ մասնակցության հետ կապված առաջանում են որոշակի օրյեկտիվ և սուբյեկտիվ սահմանափակումներ։ Հակասական է, սակայն՝ փաստ, որ երիտասարդության խնդիրները՝ որպես ժամանակակից հասարակական կյանքի սոցիալաբնական արավել ակտիվ խմբի խնդիրներ, մյուս են տակավին չինտելեկտուված կամ ուսումնասիրվում են առավելապես ընդհանրական, մակերեսային մակարդակով, ինչն իր հերթին խոչընդոտում է հիմնախնդիրների ճշգրտմանը, կամսատեսմանը և ախտորոշմանը, հետևաբար՝ նաև առկա խնդիրների լուծմանն ուղղված համակարգային որոշումների կայացմանը։ Այս համատեքստում փաստարկված երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման համար արդիական են դառնում երիտասարդական հետազոտությունների իրականացումը, երիտասարդական հիմնախնդիրների պարբերական դիտարկումը։

Հայաստանի երիտասարդության ազգային նախորդ գեկույցը մշակվել է 2006 թվականին։ 2007 թվականին այն տպագրվել և ներկայացվել է լայն հասարակությանը։ Երիտասարդության ազգային առաջին գեկույցը հիմք հանդիսացավ «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքական

նության 2008-2012 թվականների ռազմավարության» մշակման և իրագործման համար։

2011 թ-ին ՀՀ Կառավարության կողմից երիտասարդության ազգային նոր գեկույցի նախապատրաստումը սահմանվեց որպես պետական երիտասարդական քաղաքականության գերակա խնդիր, և նոյն թվականին ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարությունը ձեռնամուկս եղավ Հայաստանի երիտասարդական գեկույցի նախապատրաստման աշխատանքներին։

Ազգային երիտասարդական երկրորդ գեկույցը միտված է Հայաստանի երիտասարդության շրջանում առկա խնդիրների համապարփակ ամփոփմանը, դրանց հիմնական պայմանների և պատճառների բացահայտմանը, նշանակալի ազդեցության վերլուծմանը, ինչպես նաև այդ խնդիրների լուծման գործնական ուղիների առաջարկմանը։ Ակնհայտ է, որ նոր գեկույցը, նախորդի համեմատ, առավել ամբողջական դարձնելու համար պետք է ստանար ինստիտուցիոնալ գարգացում և ներկայացներ երիտասարդական հետազոտությունների որակապես նոր մակարդակ։ Աշխատանքների կազմակերպման ընթացքում նաև ակնհայտ դարձավ, որ Ազգային գեկույցի՝ մեկ առանձին փորձագիտական խմբի կողմից 5 տարվա պարբերականությամբ նախապատրաստումը առկա խնդիրներն իրենց ամբողջականության մեջ վեր հանելու և համապատասխան լուծումների առաջարկներ մշակելու հնարավորություն չի տալիս։ Մենք առավել նպատակային համարեցինք այն, որ փորձենք երիտասարդական ուսումնասիրություններն առհասարակ դնել ինստիտուցիոնալ գարգացման ծանապարհի վրա, այն է՝ ազգային յուրաքանչյուր գեկույցի նախապատրաստման ժամանակ արդեն իսկ ունենալ պարբերական հետազոտությունների արդյունքներ՝ որոշակի թվային և որակական տվյալներ, որոնց հանրագումարային վերլուծություններն ել կդառնան

ազգային գեկույցի հենքը: Նամանավանդ որ ՀՀ Կառավարության կողմից Երիտասարդական հետազոտությունների ինստիտուտի կայացումն ու զարգացումը սահմանվել են որպես 2012 թ-ի Երիտասարդական քաղաքականության գերակա ուղղություն: Այդպիսի ինստիտուտի կողմից Երիտասարդության հարցերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը հնարավորություն կընծեռեն իրականացնելու խնդիրների պարբերական մոնիթորինգ և գիտական ու կիրառական ընթացիկ վերլուծություններ՝ ներգրավելով ոլորտի փորձագետների առավելայն շրջանակ:

Մյուս կողմից էլ 2011 թ-ին ՀՀ վարչապետին առընթեր ազգային Երիտասարդական քաղաքականության խորհրդի և ՍԱԿ-ի Զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակի միջև կնքվեց համագործակցության հուշագիր, որի հիմնական նպատակն էր Երիտասարդական հետազոտությունների համատեքստում կատարել Երիտասարդների ծգումների և ակնկալիքների համապարփակ ուսումնասիրություն: Այժմ նախապատրաստավոր են նաև ՄԱԶՁ-ի հայաստանյան գրասենյակի կողմից անցկացված «Երիտասարդների ծգումները և ակնկալիքները» հարցման արդյունքները, որոնք, ըստ Էւլյան, կօգնեն առավել անաշառ գնահատելու իրավիճակը և օգտակար ռեսուրս կիանդիսանան ազգային գեկույցի ամբողջականացման համար, հատկապես՝ արդյունավետ վերլուծությունների առունուկ:

Դրանով պայմանավորված՝ գեկույցը կիրապարակվի երեք հիմնական մասերով.

1. Հետազոտական մաս, որում ներկայացվում են Երիտասարդության շրջանում կատարված սոցիոլոգիական հետազոտության հիմնական արդյունքները, և վեր են հանվում հիմնական խնդիրները,
2. Վերլուծական մաս, որում կներկայացվեն այդ խնդիրների փորձագիտական վերլուծությունները, և կուսումնասիրվեն հիմնական օրինաչափությունները,

3. Կիրառական մաս, որը, հիմնական հետազոտական և վերլուծական արդյունքներով պայմանավորված, միտված կլինի Երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ռազմավարական առանցքային ուղենիշների առանձնացմանը:

Այս աշխատանքը Հայաստանի Երիտասարդության ազգային գեկույցի առաջին մասն է, որն ընդգրկում է Երիտասարդության խնդիրների՝ 13 առանցքային ոլորտներում իրականացված համապարփակ սոցիոլոգիական հետազոտության հիմնական արդյունքները: Հետազոտական մասը հասարակական լայն քննարկումների առարկա է դառնալու, ինչն առավել արդյունավետ վերլուծությունների իրականացնելու հնարավորություն կտա՝ դրանով իսկ Հայաստանի Հանրապետությունում Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կայացման և զարգացման համար անհրաժեշտ իիմքեր ստեղծելով: Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի միջոցով իրականացվելիք անկախ փորձագիտական վերլուծությունների և ՄԱԶՁ-ի հայաստանյան գրասենյակի հարցումների արդյունքների հիման վրա մենք կկարողանանք ձևավորել Հայաստանի Երիտասարդության ազգային գեկույցի երկրորդ՝ վերլուծական մասը:

Միևնույն ժամանակ ուսումնասիրությունների արդյունքների և ազգային վիճակագրական տվյալների համադրումը հիմք կիանդիսանա Հայաստանի Հանրապետության Երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության մշակման համար:

**Արևեն Քարամյան**  
**ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ**

# ՄԵՐՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## Հետազոտության նյասակը և բովանդակությունը

Երիտասարդական ազգային գեկույցի շրջանակներում կատարված հետազոտության նպատակն է եղել կյանքի տարբեր ոլորտների մկանամբ Հայաստանի երիտասարդության դիրքորոշումների, ինչպես նաև Հայաստանում ընթացող գործընթացների վերաբերյալ գնահատականների բացահայտումը:

Հետազոտությունը ամդրադառնում է հետևյալ ոլորտներին.

1. Ազգային ինքնություն,
2. Լեզվա-մշակութային կողմնորոշում և հաղորդակցական ունակություններ,
3. Հանրակրթական դպրոց և բուհ,
4. Կրոն և եկեղեցի,
5. Ընտանիք՝ վերարտադրողական վարք,
6. Ընտանիք՝ եմանսիպացում,
7. Վարքագիծ և ենթամշակութային տիպեր,
8. Զբաղվածություն,
9. Քաղաքական մասնակցություն,
10. Քաղաքական դիրքորոշումներ,
11. Քաղաքացիական մասնակցություն,
12. Միջոցահար,
13. Բանակ:

## Ըստանքը

Հետազոտության ընդհանուր համակցությունը ՀՀ 18-ից 30 տարեկան երիտասարդներն են: Հետազոտության ընտրանքի ծավալը, ռեսուլտսային սահմանափակումներով պայմանավորված, սահմանվել է 1.200 անձ: Իրականացված երիտասարդական հետազոտությունում որպես հատուկ հետաքրքրություն ներկայացնող խումբ է սահմանվել ուսանողությունը (18-ից 30 տարեկանների կազմում):

Հետազոտության ընտրանքի կազմավորման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԱՎԾ կողմից 2010 թ-ին հրատարակված ՀՀ ժողովրդագրական ժողովածուն: Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2010 թ-ին Հայաստանի Հանրապետությունում 18-ից 30 տարեկան բնակչությունը կազմում էր ամբողջ բնակչության 31.27%-ը: ՀՀ երիտասարդության սեռատարիքային կազմը, ըստ բնակավայրի տիպի, տրված է Աղյուսակ ( ) 1.-ում:

### 1. ՀՀ 18-ից 30 տարեկան բնակչության սեռատարիքային կազմը՝ ըստ բնակավայրի տիպի:

Տարիք	Գյուղ			Քաղաք			Երևան			ՀՀ
	Տղամ.	Կին	Ընդ.	Տղամ.	Կին	Ընդ.	Տղամ.	Կին	Ընդ.	
18-19	18.8%	18.7%	18.8%	16.6%	16.3%	16.5%	14.5%	15.7%	15.0%	16.8%
20-24	42.1%	42.9%	42.5%	42.3%	41.9%	42.1%	39.5%	40.2%	39.8%	41.5%
25-30	39.1%	38.4%	38.7%	41.0%	41.8%	41.4%	46.0%	44.2%	45.1%	41.7%
Ընդ.	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

ՀՅ Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ Հայաստանի Հանրապետությունում ուսանողների քանակը 2010 թ-ին կազմել է 111.003 անձ՝ (որից 58.659-ը կամ 52.8%-ը՝ կանայք):<sup>2</sup> Օստարելիյա ուսանողների քանակը կազմել է 2.788 անձ, որոնցից 1.377-ը կամ 49.4%-ը՝ կանայք: Այսպիսով՝ ՀՅ քաղաքացի հանդիսացող ուսանողների ընդհանուր քանակը կազմում է 108.215 անձ, որոնցից 57.288-ը կամ 52.9%-ը կանայք են:

ՀՅ ԱՎԾ տվյալներով՝ ՀՅ-ում 18-ից 30 տարեկան բնակչության քանակը կազմել է 748.587 անձ: Նետևաբար ՀՅ 18-ից 30 տարեկան բնակչության կազմում ուսանողների մասնաբաժինը **14.5%** է ( $108.215 / 748.587 = 0.145$ ):

Հիմնվելով ԱՎԾ տվյալների վրա՝ կառուցվել է երկու ընտրանք: Առաջինը 18-ից 30 տարեկան 993 անձից կազմված քվոտային ընտրանքն է՝ հիմնված բնակչության այդ հատվածի սեռատարիֆային և մարզային բաշխման վրա (Աղյուսակ 2. և Աղյուսակ 3.):

#### 2. ՀՅ մարզերում 18-ից 30 տարեկան բնակչության սեռային կազմը:

Սեռ	Արգ.	Ար.	Արմ.	Եր.	Գեղ.	Կոտ.	Լոռ.	Շիր.	Սյն.	Տավ.	ՎՃ	Ընդ.
Իգ.	51.58%	50.66%	50.22%	48.20%	52.17%	51.01%	50.87%	49.83%	51.47%	51.92%	52.72%	<b>50.05%</b>
Ար.	48.42%	49.34%	49.78%	51.80%	47.83%	48.99%	49.13%	50.17%	48.53%	48.08%	47.28%	<b>49.95%</b>
<b>Ընդ.</b>	<b>100.0%</b>											

#### 3. ՀՅ մարզերում 18-ից 30 տարեկան բնակչության սարիմային կազմը:

Տարիք	Արգ.	Ար.	Արմ.	Եր.	Գեղ.	Կոտ.	Լոռ.	Շիր.	Սյն.	Տավ.	ՎՃ	Ընդ.
18-19	19.1%	17.6%	17.2%	15.0%	18.1%	16.6%	17.4%	18.1%	18.5%	17.3%	19.8%	<b>16.8%</b>
20-24	41.3%	43.2%	42.3%	39.8%	42.3%	43.5%	42.0%	42.4%	40.6%	41.0%	43.0%	<b>41.5%</b>
25-30	39.7%	39.2%	40.5%	45.1%	39.6%	40.0%	40.5%	39.5%	40.9%	41.7%	37.2%	<b>41.7%</b>
<b>Ընդ.</b>	<b>100.0%</b>											

Երկրորդ ընտրանքը կազմավորվել է 203 ուսանողներից՝ հաշվիառնելով ուսանողության բաշխումը Երևանում և մարզերում: Այդ ուսանողների սեռատարիֆային բաշխումը պատահականության սկզբունքով կազմավորվել է այն տնային տնտեսություններում, որտեղ եղել են ուսանողներ: Այս ընտրանքում սեռային բաշխումը ստուգել է հետևյալ պատկերը. տղաներ՝ 50.8%, աղջիկներ՝ 49.2%, ինչը լավ է մոտարկում տղաների և աղջիկների հարաբերակցությունն ըստ ՀՅ ԱՎԾ տվյալների՝ 1.12:<sup>3</sup>

Իրականացված ընտրանքը կազմված է 1.196 անձից, որոնցից 336-ը ուսանողներ են:

#### 4. Հետազոտության հիմնական և հավելյալ թվարկություն:

	Թամակ	Տոկոս
Հիմնական ընտրանք	993	83.0%
Հավելյալ ընտրանք (ուսանողներ)	203	17.0%
<b>Ընդամենը</b>	<b>1.196</b>	<b>100.0%</b>

- Տղված է ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական, ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսանողների ընդհանուր թվարկություն:
- Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2010 թվականին և դիմամիկ շարքեր (2005-2010), ՀՅ ԱՎԾ, Երևան, 2011, էջ 125:
- Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2010 թվականին և դիմամիկ շարքեր (2005-2010), ՀՅ ԱՎԾ, Երևան, 2011, էջ 162:

Չեզոքացնելու համար այն շեղումները, որոնք ամբողջ ընտրանքի սեռատարիքային և մարզային բաշխումներում ի հայտ են գալիս ուսանողների հավելյալ ընտրանքից, ինչպես նաև ուսանողների իրական հարաբերակցությունը միաժամանակ պահպանելու նպատակով իրականացվել է ամբողջ ընտրանքի խեռատիվ համակշռում ըստ հետազոտության համար էական ժողովրդագրական տվյալների՝ սեռ, տարիք, բնակավայրի տիպ և ուսանող-ոչ ուսանող հարաբերակցություն։ Ընտրանքի կշիռները 2 խեռացիաների ընթացքում համեմատվել են ՀՀ պաշտոնական տվյալների հետ։ ՀՀ 18-ից 30 տարեկան բնակչության՝ ըստ սեռի, տարիքի, բնակավայրի տիպի և ուսանող-ոչ ուսանող հարաբերակցությանը բաշխումները ՀՀ ԱՎԾ և հետազոտության համակշռված ընտրանքի տվյալներով ներկայացված են Աղյուսակ 5.-ում։

**5. Հարցվածների իխնական բնութագրերի բաշխումներն ընդհանուր համակցությունում (ըստ ՀՀ ԱՎԾ սյաների) և հետազոտության համակռված ընտրանքում:**

Բնութագիր	Կատեգորիա	Հարաբերակցությունն ընդհանուր համակցությունում	Հարաբերակցությունն իխնական բնութագրավորման ընտրանքում
Ուսանող-ոչ ուսանող	Ուսանող	14.50%	14.72%
	Ոչ ուսանող	85.50%	85.28%
	<b>Ընդամենը</b>	<b>100.00%</b>	<b>100.00%</b>
Տարիքային խումբ	18-19	16.81%	16.80%
	20-24	41.48%	41.49%
	25-30	41.71%	41.71%
	<b>Ընդամենը</b>	<b>100.00%</b>	<b>100.00%</b>
Սեռ	Արական	50.05%	50.23%
	Իգական	49.95%	49.77%
	<b>Ընդամենը</b>	<b>100.00%</b>	<b>100.00%</b>
Բնակավայրի տիպ	Երևան	33.57%	33.32%
	Քաղաք	31.02%	31.05%
	Գյուղ	35.41%	35.62%
	<b>Ընդամենը</b>	<b>100.00%</b>	<b>100.00%</b>

# 1. Ազգային ինֆորմացուն

Հայ երիտասարդության ազգային ինմուռյունն ուսումնասիրվել է հետևյալ դիմանվյուններից.

- Ի՞նչ համանիշներով է Հայաստանի երիտասարդությունը հային սահմանագատում ոչ հայից: Այլ կերպ ասած՝ որո՞նք են հայի նույնականացման բաղադրիչները Հայաստանի երիտասարդության դասկիրացումներում, և ի՞նչ գերակայություններ դրամ ունեն:
- Ինչո՞ւ իսկ է ներազգային (սերհայկական) միասնությունը: Այլ կերպ ասած՝ Հայաստանում քնակլող հայ երիտասարդն ինչո՞ւ այլ տողիալական տարածություններ է ընկալում հայերի երնուժակութային տարբեր հանրույթների միջև:



## Ո՞Վ Է հայր

Ազգային նույնականացման հարցերը բարդ են և բազմաշերտ: Դրանց ուսումնասիրությունները երկփեղկվում են՝ սկսած «ազգ» հասկացության սահմանումներից: Ներկայումս մրցակցում են ազգի և ազգային նույնականացման երկու հիմնական մոտեցումներ: Առաջին մոտեցման շրջանակներում, որն ընդունված է և զարգացվում է «մեյնսթրիմ» քաղաքագիտական տեսությունում, նույնացվում են քաղաքացիությունը և ազգային պատկանելիությունը: Օրինակ՝ ամերիկացի են ԱՄՆ բոլոր քաղաքացիները, ֆրանսիացի են Ֆրանսիայի բոլոր քաղաքացիները, թուրք են Թուրքիայի բոլոր քաղաքացիները: Դրանից հետո է միայն, որ մասնավորեցվում է՝ «արաբական ծագմամբ» (ֆրանսիացիներ), «իտալական արմատներով» (ամերիկացիներ), «լեռնային» (թուրքեր): Երկրորդ մոտեցմանը նույնացվում է ազգային և էթնիկ պատկանելիությունը, այս է՝ հայ կամ հույն ազգին է պատկանում էթնիկ հայը կամ հույնը՝ իրենց մի շարք ատրիբուտներով:

Ազգ հասկացության սահմանման ընտրությունն ամենախորքային մակարդակում կանխորոշում է ոչ միայն պետությունների ներքին և արտաքին քաղաքականության եռթյունը, այլև այդ պետությունների, նրանց վերնախավերի և հասարակությունների միջև փոխհարաբերությունների դրդապատճառները և բուն փոխհարաբերությունները:

Դայերը, ինչպես իին պատճություն և զարգացած մշակույթ ունեցող այլ էթնիկ հանրույթները, որոնք պարբերաբար ստեղծել և կորցրել են իրենց պետականություննը, հակված են ազգ և էթնոս հասկացությունների նույնացմանը: Ավելին՝ հայ հասարակությունում, բացառությամբ հասարակագիտական շրջանակների, ըստ եռթյան, բացակայում է էթնոս հասկացությունը (ժամանակակից բովանդակությամբ):

Դարձերի հաջորդ շերտը, որը կապված է ազգային նույնականացման հետ, ներկայացնում է տվյալ ազգին պատկանող անձի նույնականացման համար ամերաժեշտ բնութագրերը: Ո՞ր բնութագրերն են առկա և գերակա՝ **ինքնանույնականացումը**՝ որպես տվյալ հանրույթի միասնականության սոցիալ-հոգեբանական նախահիմք, **«արյունը»**, որպես կենսաբանական (գենետիկական) շղթա, որը տվյալ պահին միավորում է տվյալ ազգին պատկանող անձանց և նրանց նախնիներին (առանձին հարցեր են՝ մինչև ո՞ր սերունդը և ի՞նչ «մաքրությամբ»), **մշակույթը**՝ որպես անձի մտածողության և աշխարհայցքի ծևավորման հիմնական միջավայր, **լեզուն**՝ որպես մշակույթի կերտման, զարգացման ու անձի՝ իր և հասարակության հետ փոխհարաբերությունների հիմնական գործիք, **կրոնը**՝ որպես բնականի և գերբնականի միջև տվյալ հանրույթի փոխհարաբերությունների համակարգ, թե **հայրենիքը**՝ որպես տվյալ ազգի կողմից մշակութայնացված տարածք:


## Անձի՝ որպես հայի նույնականացման դարսաղիր դայմանները

Վերոնշյալ հարցերին պատասխանելու համար հարցվողներին տրվել է «Դետույալ հատկանիշներից որո՞նք են պարտադիր հայ համարվելու համար» հարցը, իսկ որպես հատկանիշներ առաջադրվել են՝

1. Իրեն հայ համարելը,
2. Դայ Առաքելական Եկեղեցու հետևորդ լինելը,
3. Դոր հայ լինելը,
4. Մոր հայ լինելը,
5. Դայերեն խոսել ինանալը,
6. Դայաստանը որպես հայրենիք ընկալելը:

Պատասխանների բաշխումները տրված են Գծապատկեր () 1.-ում:

**1. «Հետևյալ համախնդիրից որո՞նք են պարագիր հայ համարվելու համար»:**




Դայաստանի երիտասարդության շրջանում անձին հայ համարելու համար առավել տարածված պարտադիր պայմանն անձի ինքնանույնականացումն է որպես հայ (96%): Տարածվածության առունով միաժամանակ երկրորդ շերտն են կազմում «արյունը» (հոր հայ լինելը՝ 86.6%) և «մշակույթը» (իր երկու բաղադրիչներով՝ «լեզու» 86.6% և «կրոն» 88.6%): Երրորդ շերտում են «հայրենիքի գերակայությունը» (79.9%) և «գտարյունությունը» (մոր հայ լինելը՝ 72.2%):

Ակնհայտ է, որ դիտարկված բաղադրիչների այսպիսի բարձր տարածվածությունը ենթադրում է, որ հայ համարվելու համար անհրաժեշտ է, որպեսզի անձը միաժամանակ բավարարի պայմանների որոշակի ենթախմբերի: Պարզվել է, որ երիտասարդների մոտ կեսը (48.7%) անձին որպես հայ ընկալելու համար անհրաժեշտ է համարում դիտարկված բոլոր 6, երեք քառորդը (75.7%) 5 կամ ավելի, մոտ 89.5%-ը 4 կամ ավելի և մոտ 96.7%-ը 3 կամ ավելի պայմանների միաժամանակյա բավարարումը (Գծապատճեր 2.):

Ստացվում է, որ Դայաստանի երիտասարդության դիրքորոշումներում հայ հանրությունը բավականին «փակ» հանրույթ է: Նրանք խստապահանջ են անձին հայ համարելու հարցում:

**2. Հայ համարվելու համար անհրաժեշտ դայմանների բանակի բաշխումը:**




## Պահանջանված է արդյունակ հայոց լեզուն

Եթե հայերեն խոսել իմանալը հայ համարվելու համար ամենատարածված պարտադիր պայմաններից է, ապա մաքուր և գեղեցիկ հայերենի գործածությունը և դրա պահպանը հասարակության ընդհանուր մշակույթի զարգացածության ինդիկատորն են (Գծապատկեր 3.):

Հայոց լեզվի պահպանվածության վերաբերյալ երիտասարդների ոիլքորոշումները գնահատվել են հետևյալ երեք հարցերի տրմամբ.

1. «Ընդհանրապես մենք՝ հայերս, պահպանում ենք մաքուր և ճիշտ հայերենը»:
2. «Ի՞նչ եք կարծում, հեռուստատեսությամբ ցուցադրվող հայերեն սերիալները և երիտասարդական շոուները մաքուր և ճիշտ հայերենով են մերկայացվում»:
3. «Համաձա՞ն եք արդյոք, որ հեռուստաեթերում աղավաղվում է հայոց լեզուն»:

### ☒ 3. Հայոց լեզվի պահպանվածության բնութագրեր:



Հարց 1. «Ընդհանրապես մենք՝ հայերս, պահպանում ենք մաքուր և ճիշտ հայերենը»:

Հարց 2. «Ի՞նչ եք կարծում, հեռուստատեսությամբ ցուցադրվող հայերեն սերիալները և երիտասարդական շոուները մաքուր և ճիշտ հայերենով են մերկայացվում»:

Հարց 3. «Համաձա՞ն յն եք արդյոք, որ հեռուստաեթերում աղավաղվում է հայոց լեզուն»:

Տրված են «Միանշանակ այո» և «Այո» պատասխանների հանրագումարները:

Հարցերին տրված պատասխաններից բխում է, որ հեռուստատեսությունը հայոց լեզվի աղավաղման հզոր սպառնալիք է: Ավելիօն՝ մեծ սպառնալիք են մասնավորապես եթեր հեռարձակվող երիտասարդական շոուներն ու սերիալները: Հայոց լեզվի աղավաղման վտանգի լրջության մասին է վկայում նաև այն, որ ըստ երիտասարդների պատասխանների՝ հենց ինքը՝ հայ հասարակությունն է դարձել մաքուր և գրական հայերենի սպառնալիք:

## Ներհայկական միասնություն

### Սոցիալական տարածությունները հայերի էքնոմւսակութային խմբերի միջև

Հայաստանի աշխարհագրական պայմանների և պատմական ճակատագրի հետևանքով հայ ազգի կազմում ձևավորվել են եթերութակութային տարրեր խմբեր, այդ թվում՝ նաև սփյուռք: Ընդ որում՝ բազմազան են ոչ միայն Հայաստանում առկա եթերութակութային խմբերը, այլև Սփյուռքը:

Ներկայումս տեղի ունեցող գլոբալ, տարածաշրջանային և ներհայելական զարգացումներն արդիական են դարձնում համահայելական միասնականության խնդիրները, որոնք վերաբերում են և՝ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող հայերի էթնոմշակութային տարրերին, և՝ հայելական երկու պետությունների հայ հանրույթներին, և՝ այդ պետությունների ու սփյուռքի հայ հանայքներին:

Միասնականության այդ բարդ հարցերի պարզաբանման տեսակետից կարևոր է ունենալ համապատասխան գործիք՝ ինչպես առկա, այնպես էլ զարգացումների արդյունքում փոփոխվող ներազգային համախմբվածության մակարդակը գնահատելու համար:

Այդպիսի գործիք է Բոգարդուսի սանդղակը<sup>4</sup>, որի միջոցով չափվում են տարրեր հանրույթների միջև առկա սոցիալական տարածությունները: Այդ սանդղակը, մշակվելով շուրջ մեկ դար առաջ, իր արդյունավետությամբ մինչ օրս հաջողությամբ օգտագործվում է տարբեր երկրների հասարակագետների կողմից՝ կիրառական հասարակագիտական խնդիրներ լուծելու նպատակով:

Բոգարդուսի սանդղակը կառուցվում է հետևյալ կերպ. որոշակի խնդիր (որի համար չափվում է նրա ընկալումներում մեկ այլ խնդիր նկատմամբ առկա սոցիալական տարածությունը) պատկանող անձանց ներկայացվում է սոցիալական շիման տեսակելի ցանկ, և տրվում է հարց, այն է՝ թե նրանց համար սոցիալական ո՞ր շիման ընկալումներն են ընդունելի մեկ այլ խնդիր (այն խնդիր, որի նկատմամբ չափվում է սոցիալական տարածությունը) պատկանող անձանց հետ:<sup>5</sup> Առաջին խնդիր ներկայացվուցին ընկալումներում որպես սոցիալական տարածություն է սահմանվում երկրորդ խնդիր ներկայացվուցին հետ ընդունելի սոցիալական շիման քանակը: Առաջին խնդիր ընկալումներում արտացոլված սոցիալական այդ տարածությունների միջին արժեքը սահմանվում է որպես երկրորդ խնդիր նկատմամբ առկա սոցիալական տարածություն:

Տվյալ դեպքում առաջին խումբը Հայաստանի երիտասարդությունն է, և չափվում են նրա ընկալումներում հայերի տարրեր էթնոմշակութային խնդիրի նկատմամբ առկա սոցիալական տարածությունները: Հետազոտական ռեսուլտաներով պայմանավորված՝ դիտարկվել են հայերի հետևյալ էթնոմշակութային խնդիրը՝ 1. սփյուռքահայեր, 2. իրանահայեր, 3. արցախահայեր, 4. Աղբբեջանից ներգաղթած հայեր, 5. կաթոլիկ հայեր, 6. աղանդավոր հայեր, 7. Թուրքիայում բնակվող և իրենց հայ համարող իշլամադավան հայեր:

Որպեսզի հնարավոր լինի տարրեր (արտաքին) կոնտեքստում մեկնաբանել ներազգային սոցիալական տարածությունները, կառուցվել են նաև Հայաստանի երիտասարդության կողմից ընկալվող սոցիալական տարածությունները մի քանի այլ ազգերի, ռասայական տիպի կամ կրոնի ներկայացվուցին հերթին՝ մասնավորապես ռուսների, գերմանացիների, թուրքերի, սևամորթների և մահմեդականների նկատմամբ:

Հարցվողներին ներկայացվել են սոցիալական շիման չորս տեսակներ՝ հետևյալ հարցերի տեսքով.

1. «Կընդունեի՞ք, եթե Ձեր եղբայրը/քույրը, աղջիկը/տղան ամուսնանար ազգի կամ խնդիր անդամի հետ»:
2. «Մոտ ընկերություն կանեի՞ք ազգի կամ խնդիր անդամի հետ»:
3. «Կաշխատեի՞ք նոյն խնդրում ազգի կամ խնդիր անդամի հետ»:
4. «Հայաստանի քաղաքացիություն կտայի՞ք ազգի կամ խնդիր անդամին»:

Ակնհայտ է, որ հարազատի՝ տվյալ հանրույթի ներկայացվուցի հետ ամուսնությունը հնարավոր ամենամուտ սոցիալական շիման է: Չորս հարցերի հիման վրա կառուցված Բոգարդուսի սանդղակի փոփոխության միջակայքը է [0; 4], որտեղ 0-ն հնարավոր ամենափոքր սոցիալական

4 Emory S. Bogardus: "Measuring Social Distances." Journal of Applied Sociology 9 (1925), p. 299-308.

5 Բոգարդուսի դասական սանդղակի կառուցման համար կիրավում է 7 հարց, սակայն տարրեր հետազոտություններում, կախված հետազոտական նպատակներից, կարող են կիրավել այլ քանակով հարցեր:

տարածությունն է, ինչը նշանակում է, որ տվյալ հաճույքի հետ ընդունելի են դիտարկված բոլոր չորս շփումները, իսկ 4-ն առավելագույն տարածությունն է, ինչը նշանակում է, որ տվյալ հաճույքի հետ անընդունելի են դիտարկված բոլոր չորս շփումները:

Ստացված դրական («Այ») պատասխանները տրված են Այյուսակ 6.-ում: Այյուսակի տողերում ազգերը և խմբերը դասավորված են ըստ «ամուսնություն» սոցիալական շվման ընդունելիության աստիճանի նվազման: Չնայած ներկայացվող հարցերի պատասխանների հիմնական նպատակներն էն սոցիալական տարածության չափման սանդղակի կառուցումը և սոցիալական տարածությունների չափումը, սակայն այդ տվյալներն ինքնին հետաքրքիր են դիտարկվող ազգերի և խմբերի նկատմամբ Հայաստանի երիտասարդության դիրքորոշումների բովանդակության ու բնույթի մասին պատկերացում կազմելու առումով:

## 6. Հայերի էքնոմշակութային խմբերի, այլ ազգերի, ռասայական և կրոնական խմբերի հետ սոցիալական շփումների ընդունելիության ասիժանը Հայաստանի երիտասարդության կողմից (մուգ կաղողական դաշտում նշված են համեմատաբար բարձր արժեները, իսկ բաց կաղողական դաշտում ցածր արժեները):

Հայ էքնոմշակութային խումբ/ազգ	Ամուսնություն	Մոտ ընկերություն	Աշխատանք նույն խմբում	Քաղաքացիություն
Սփյուռքահայ	75.3%	88.1%	89.0%	88.3%
Ուուս	61.8%	90.4%	92.7%	79.2%
Կաթոլիկ հայ	60.7%	77.3%	79.3%	78.9%
Արցախահայ	58.8%	77.7%	78.8%	74.9%
Գերմանացի	51.0%	73.2%	79.1%	59.5%
Իրանահայ	40.5%	65.7%	73.1%	66.7%
Ադրբեյջանից ներգաղթած հայ	32.5%	51.9%	59.1%	55.8%
Սլեամորք	24.8%	64.6%	70.2%	53.5%
Աղանդավոր հայ	13.8%	26.4%	42.9%	40.9%
Թուրքիայում ապրող իսլամադավան հայ	7.3%	24.9%	36.2%	22.4%
Թուրք	6.2%	23.4%	35.7%	10.9%
Մահմեդական	5.0%	25.7%	38.5%	18.3%

Այյուսակում նույն կապույտ դաշտում նշված են սոցիալական շփումների թույլատրելիության առավել բարձր արժեները, իսկ բաց կապույտ դաշտում՝ ցածր արժեները: Ըստ տողերի և սյուների՝ իրականացված է միասնական «գումարաժամանում», որի արդյունքում տվյալ սոցիալական շվման տեսակետից հայերի էքնոմշակութային խմբերի և ազգերի դասակարգումն արտացոլված է այուների «գումարաժամանամբ», իսկ սոցիալական շփումների տեսակետից դասակարգումը՝ տողերում առկա «գումարաժամանամբ»: Ընդ որում՝ համարելի են նաև միաժամանակ տարբեր տողերում և սյուներում տրված տվյալների գույները:

Այսպիսով՝ տվյալներից բխող առավել ընդհանուր և հավանաբար առավել կարևոր եզրակացությունն այն է, որ Հայաստանի երիտասարդության համար այլ ազգերի ներկայացուցիչների հետ սոցիալական շփումները կարող են ավելի ընդունելի լինել, քան հայերի էքնոմշակութային խմբերի ներկայացուցիչների հետ: <sup>6</sup> Այս արդյունքը, կախված վերլուծության տեսանկյունից, կարող է տարբեր կերպ մեկնաբառվել:

<sup>6</sup> Այդ իրողությունները, ի թիվս այլ գործնների, բացատրվում են Հայաստանի հասարակությունում սոցիալական կապիտալի ցածր մակարդակով, որի մասին՝ հաջորդիվ:

Հայերի ազգային միասնականության տեսանկյունից մեկնաբանելու դեպքում ակնհայտ է, որ այն խաթարված է, և բացի դրանից՝ գոյություն ունի խնդիրների համակարգ, որը խոչընդոտում է հայերի ազգային միասնականության վերակայացմանը:

Հայերի եթոնմշակութային խմբերի և այլ ազգերի ու կրոնական խմբերի նկատմամբ Հայաստանի երիտասարդության ընկալումներում հաշվարկված սոցիալական տարածությունները, որոնք տրված են Գծապատճեր 4.-ում, ընդհանրացնում են Աղյուսակ 6.-ում ներկայացված տվյալները և հիմնավորում վերոնշյալ եզրակացությունը:

#### 4. Երիտասարդների կողմից ընկալվող սոցիալական տարածությունները:

Սոցիալական տարածություն

0.0	1.0	2.0	3.0	4.0
.....	.....	.....	.....	.....

**0.59** Ավյուռքահայ

**0.76** Ոուս

**1.04** Կաթոլիկ հայ

**1.10** Արցախահայ

**1.37** Գերմանացի

**1.54** Իրանահայ

**1.87** Սևամորթ

**2.01** Աղրբեջանից ներգաղթած հայ

**2.76** Աղանդավոր հայ

**3.09** Թուրքիայում ապրող իսլամադավան հայ

**3.13** Մահմետական

**3.24** Թուրք

Գծապատճերից երևում է, որ հայերի եթոնմշակութային խմբերի նկատմամբ Հայաստանի երիտասարդության ընկալումներում առկա սոցիալական տարածություններն ընդմիջվում են այլ ազգերի նկատմամբ ունեցած տարածություններով: Օրինակ՝ ռուսների նկատմամբ առկա սոցիալական տարածությունն ավելի փոքր է, քան կաթոլիկ հայերի, արցախահայերի, իրանահայերի, Աղրբեջանից ներգաղթած հայերի, աղանդավոր հայերի և Թուրքիայում բնակվող ու իրենց հայ համարող իսլամադավան հայերի պարագայում: Այդ տարածությունը շատ քիչ է զիջում սփյուռքահայերի նկատմամբ ընկալվող սոցիալական տարածությանը:


Ծաս մեծ սոցիալական տարածությունների վկա են ընկալվում Աղրբեջանից ներգաղթած հայերը և հատկապես Թուրքիայում բնակվող ու իրենց հայ համարող իսլամադավան հայերը: Եթե առաջինը փաստացի լուրը խնդիր է, ապա հաշվի առնելով տարածաշրջանային հնարավոր զարգացումների սցենարային բազմազանությունը՝ երկրորդը կարող է դառնալ ել ավելի լուրջ խնդիր՝ համարդիկելով Բալկաններում քրիստոնյա և իսլամադավան սլավոնների միջև արդեն 150 տարի առկա անլուծելի խնդիրների հետ:

Ստացված արդյունքի համատեքստում հարց է ծագում՝ հայերի եթոնմշակութային խմբերի և այլ ազգերի, ռասաների ու կրոնների ներկայացուցիչների նկատմամբ Հայաստանի երիտասարդության շրջանում առկա սոցիալական տարածությունների ընկալումները ձևավորվում և գտնվում են միևնո՞ւն, թե՞ տարբեր աշխարհայացքային համակարգերում: Հարցը կարևոր է հայերի

Էթնոմշակութային խմբերի նկատմամբ սոցիալական տարածությունների նվազեցման (կառավարման) ռազմավարությունների մշակման և կիրառման առունով: Այդ հարցի պատասխանը ստանալու համար իրականացվել է հաշվարկված սոցիալական տարածությունների գործոնային վերլուծություն:<sup>7</sup> Գործոնային նորելը ներկայացված է Գծապատկեր 5.-ում:


 **5. Հայերի էթնոմշակութային խմբերի և այլ ազգերի, ռասաների և կրոնների ներկայացուցիչների նկատմամբ Հայաստանի երիտասարդության կողմից ընկալվող սոցիալական տարածությունների գործոնային մոդելը:**

«Ազգային պատկանելիություն» x  
«ԽՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ» Ենթատարածությունը



Գ1. Ազգային պատկանելիության գործոն

«Ազգային պատկանելիություն» x «Այլ ազգերի գործոն» Ենթատարածությունը



Գ2. ԽՍԼԱՄԱԿԱՆ գործոն

Պարզվում է, որ դիտարկված ազգերի, ռասաների, կրոնների ներկայացուցիչների և հայերի էթնոմշակութային խմբերի նկատմամբ Հայաստանի երիտասարդության դիրքորոշումները կազմավորվում են երեք գործոնների ազգեցությամբ.

**Գործոն 1. «Էթնիկ դիֆերենցման գործոն»:** Այս գործոնի ազգեցությամբ աճում են հայերի էթնոմշակութային խմբերի նկատմամբ առկա սոցիալական տարածությունները:

**Գործոն 2. «ԽՍԼԱՄԱԿԱՆ գործոն»:** Այս գործոնի ազգեցությամբ աճում են մահմեդական ազգերի նկատմամբ առկա սոցիալական տարածությունները:

**Գործոն 3. «Այլ ազգերի գործոն»:** Այս գործոնի ազգեցությամբ աճում են մյուս ազգերի և ռասաների նկատմամբ առկա սոցիալական տարածությունները:<sup>8</sup>

Ստացված արդյունքը ցույց է տալիս, որ հայերի էթնոմշակութային խմբերի և այլ ազգերի նկատմամբ սոցիալական տարածությունների կազմավորումը տեղի է ունենում Հայաստանի երիտասարդության աշխարհայցքային տարբեր համակարգերում, որոնք բավականին թույլ են շաղկապված միմյանց հետ: Դրանից էլ բխում է, որ գոյություն ունեն ռազմավարություններ, որոնք

7 Գործոնային վերլուծությունն թույլ է տալիս խմբավորել մինանց հետ շաղկապված (փոխապակցված) պատկերացումները, ինչը արդյունքում հնարավոր է դատում հիմնավորված դատողություններ կատարել ինչպես առանձին պատկերացումների, այնպես էլ դրանց փոխապակցված խմբերի վերաբերյալ:

8 Համանամաս այլ հետազոտությունները ցույց են տվել, որ դիտարկվող ազգերի ավելի մեծ քանակի դեպքում այս գործոնը բարարվում է մի քանի գործոնների հետ, որոնց շարքում առանձնանում են. ա) ռուսների նկատմամբ և բ) Եվրոպական ազգերի նկատմամբ առկա սոցիալական տարածության գործոնները:

ունակ են նվազեցնելու հայերի էքնոմշակութային խմբերի նկատմամբ առկա սոցիալական տարածությունները՝ առանց էական ազդեցություն գործելու այլ ազգերի նկատմամբ գոյություն ունեցող սոցիալական տարածությունների վրա:

Սոցիալական տարածությունների գործոնային այլ մոդելների ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ գոյություն ունի նաև հայերի էքնոմշակութային խմբերի նկատմամբ առկա սոցիալական տարածությունների նվազեցման մեկ այլ՝ ավելի համբռնիանուր ռազմավարություն: Դա հասարակությունում ընդհանուր հանդուժողականության բարձրացման ռազմավարությունն է, որը միաժամանակ նվազեցնում է և հասարակության ենթամշակութային խմբերի, և՝ հասարակության մարգինալ խմբերի, և այլ ազգերի, և հայերի էքնոմշակութային խմբերի նկատմամբ առկա սոցիալական տարածությունների ընկալումնը:

Գծապատճեր 5.-ում ներկայացված գործոնների, մասնավորապես Գ2. «Հսլամական գործոն» ուսումնասիրությունը վեր է հանում հայերի էքնոմշակութային խմբերի նկատմամբ առկա սոցիալական տարածությունների մի քանի առանձնահատկություններ:

Գ2. «Հսլամական գործոն» կառուցվածքի ուսումնասիրությունից բխում է, որ հայերի էքնոմշակութային խմբերի նկատմամբ առկա սոցիալական տարածությունների կազմավորման գործում կարևոր նշանակություն ունի կրոնական պատկանելիության նկատմամբ դիրքորոշումը, որի մասնավոր դեպքն է իսլամի հանդեպ դիրքորոշումը:

Նայաստանի երիտասարդության ընկալումներում Թուրքիայում բնակվող ու իրենց հայ համարող իսլամադավան հայերը, ըստ էության, դիտարկվում են «հսլամադավան ազգերի հարրության վրա»: Գործոնում այդ հանրույթի նկատմամբ գործոնային բեռնվածքը գտնվում է «Քուրքերի» և «մահմենդական ազգերի» խմբում: Նույն գործոնի առանցքի վրա շատ բարձր բեռնվածք ունեն նաև «աղանդավոր հայերը», ինչը նշանակում է, որ Գ2-օ իրականում բաղադրյալ գործոն է, որը գործոնային մորելի կառուցման համար դիտարկված ազգերի և էքնոմշակութային խմբերի սահմանափակության հետևանքով իրեն է միավորել «աղանդավոր հայերին»: Նույն «հսլամական առանցքի վրա» իրենց բեռնվածքներով հաջորդում են «Աղրեջանից ներգաղթած հայերը», ովքեր կենցաղային պատկերացումներում երբեմն շաղկապվում են «քուրք-իսլամական» հանրույթների հետ: «Աղրեջանից ներգաղթած հայերին» հաջորդում են «իրանահայերը», ովքեր ապրում են «հսլամական տարածքում»:

Վերլուծության արդյունքն անմիջականորեն առնչվում է «Ո՞վ է հայը» բաժնի այն արդյունքի հետ, ըստ որի՝ հայ համարվելու համար Յայ Արաքելական Եկեղեցու հետևորդ լինելու պարտադիր պայմանն ունի շատ մեծ տարածվածություն՝ 90%: Յետևարար Թուրքիայի իսլամադավան հայերին հայերի կազմում է տեսնում Նայաստանի երիտասարդների առավելագույնը 10%-ը (այսինքն՝ նրանք, որոնց համար Յայ Արաքելական Եկեղեցու հետևորդ լինելը հայ համարվելու պարտադիր պայման չէ):

## Կրոն և Եկեղեցի

Եթե ազգային միասնականության խնդիրների շարքում կարևոր դեր ունի հայերի կրոնական և դավանաբանական պատկանելիությունը, ապա այդ և նմանաբնույթ հարցերում իր դիրքորոշումներով ու ռազմավարություններով կարևոր դեր ունի նաև Յայ Արաքելական Եկեղեցին: Ըստ այսմ՝ կարելի է անել հետևյալ հարցադրումները՝ Նայաստանի երիտասարդության շրջանում հեղինակության ի՞նչ ռեսուրս ունի Յայ Արաքելական Եկեղեցին, իսկ մյուս կողմից՝ հայերի ներազգային միասնականության համատեքստում, այն է՝ տվյալ պարագայում դավանաբանական տարրերությունների գործոնի կառավարման տեսանկյունից ինչպիսի՞ն է երիտասարդության գիտակցության բնույթը:

Ազգային և պետական ինստիտուտների շարքում Յայ Արաքելական Եկեղեցին Նայաստանի երի-

տասարդների դիրքորոշումներում ունի ամենաբարձր վստահությունը. նրան վստահուն է երիտասարդների 90.9%-ը (Գծապատկեր 6.): Վերջին առնվազն 15 տարիների ընթացքում այդպիսի բարձր վստահության մակարդակ չի դիտվել Հայաստանի պետական ու քաղաքական և ոչ մի ինստիտուտի նկատմամբ:

Բացի դրանից՝ իրեն Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ է համարում Հայաստանի երիտասարդության 93.2%-ը (Գծապատկեր 8.), աբեստ է ընդամենը 0.9%-ը, Աստծուն հավատում, սակայն ոչ մի կրոնի հետևորդ կամ Եկեղեցու անդամ չէ 4.1%-ը:

Երիտասարդները շատ ինտենսիվ են Եկեղեցի հաճախում: Անեն օր կամ շաբաթը մի քանի անգամ Եկեղեցի է հաճախում Հայաստանի երիտասարդների (և տղաների, և՝ աղջիկների) նոտավորապես 18%-ը (Գծապատկեր 9.), մոտ 55%-ը Եկեղեցի է հաճախում ամիսը մի քանի անգամ, իսկ ամիսը կամ տարին մի քանի անգամ՝ մոտ 75%-ը (Գծապատկեր 9.):

**Հետևաբար համահայկական միասնականության հարցերի կառավարման ոլորտում Հայ Առաքելական Եկեղեցին օժտված է մեծ ներուժով:**

Երկրորդ հարցի պատասխանը ստանալու համար պետք է քննել Հայաստանի երիտասարդության կրոնական գիտակցության բնույթը և կառուցվածքը: Զանգվածային հետազոտության շրջանակներում այդ գործընթացն իրականացվել է հետևյալ հարցախմբի միջոցով.

«Հավատո՞ւմ եք արդյոք...

1. թուղթ ու գրի ազդեցությանը,
2. աստղագուշակությանը,
3. երազներին,
4. չար աչքի ազդեցությանը,
5. աղոթքով բուժմանը,
6. հոգեկանչությանը (հոգիներ կանչելում),
7. դժոխքի գոյությանը,
8. Քրիստոնի երկրորդ գալստյանը,
9. քրիստոնյաների ու մահմեղականների՝ նույն Աստծուն հավատալում»:

Տրվել է նաև «Երբեմ եղե՞լ եք բախտագուշակի մոտ» հարցը:


Նշված հարցերին տրված պատասխաններից (Գծապատկեր 9.) բխում է, որ Հայաստանի երիտասարդության կրոնական գիտակցությունը բավականին Եկեղեցիկ է, այսինքն՝ նրանք հավատում են և քիչստոնեական դավանանքի դրույթներին, և այնպիսի դրույթների, որոնք ակնհայտորեն քրիստոնեական չեն: Սանավորապես յուրաքանչյուր երրորդ երիտասարդը հավատում է աստղագուշակությանը, իսկ 85%-ը համոզված է, որ քրիստոնյաներն ու մահմեղականները նույն Աստծուն չեն հավատում, յուրաքանչյուր երրորդն էլ եղել է բախտագուշակի մոտ:

Այսպիսով՝ չնայած Հայաստանի երիտասարդությունը Եկեղեցի շատ ինտենսիվ է հաճախում, այդուհաներձ նրա կրոնական գիտակցությունը թույլ է շաղկապված Հայ Առաքելական Եկեղեցու դավանարանությանը և առավելապես դրսկորվում է որպես ազգային նույնականացման դրզմատիզմացված բաղադրիչ: Այսինքն՝ Հայաստանի երիտասարդության՝ հայերի այլակրոն և այլադավան էթնոմշակութային խմբերի նկատմամբ ծնավորված դիրքորոշումները չունեն դավանարանական բնույթը:


Հետևաբար հայ հանրույթի միասնականության (ընդլայնման) տեսակետից կարևոր նշանակություն ունի Հայ Առաքելական Եկեղեցու դիրքորոշումը. այդ հարցում Հայ Առաքելական Եկեղեցին ունի հեղինակության նշանակալի ռեսուրս: Այլակրոն և այլադավան հայերի նկատմամբ հանդուրժողականության ածն էլ չի սպառնում Հայաստանի երիտասարդության կրոնական գիտակցության կառուցվածքում Հայ Առաքելական Եկեղեցու դավանարանության դիրքավորմանը:

Նամահայկական միասնականության հարցը կարևոր է նաև Նայաստանում (և Նայաստանից դուրս) ժողովրդագրական ծանր վիճակը շտկելու առումով։ Հայության կազմից տարբեր էթնո-մշակութային խմբերի «արտաքսումը» հավելյալ դժվարություններ է ատելում հայ հասարակության ժողովրդագրական վերարտադրման և գենետիկական բազմազանության ապահովման գործընթացներում։


6. «Որքանո՞վ եք վստահում Հայ Առանձնական Եկեղեցուն»:




7. «Բաս Ձեզ՝ Փինսանսական սուլ միջոցների ուսումնաներուն զերադասելի է Հայաստանի հին Եկեղեցիների վերականգնումը, թե՞ նորերի կառուցումը»:




8. «Դուք ո՞ր կրոնի կամ եկեղեցու անդամ կամ հետևող եք Ձեզ համարում»:



9. «Հավատո՞ւմ եմ սարդյո՞ւն...»:




10. «Կը նդունեի՞ք, եթե Ձեր եղբայրը/եղյուրը, տղան/աղջիկը ամուսնանար...»:



## 2. Ընտանիք և կենսառություն

Այս բաժնում դիտարկվում են հետևյալ հարցերը.

1. Ինչողիքի՞ն են Հայաստանի երիտասարդության դիրքությունը անուսնության և երեխաներ ունենալու հարցում. Մրցյա դրամի կարո՞ղ են բավարար ազգեցություն ունենալ Հայաստանում ։ Ողջուշագրական իրավիճակը ըստելու գործում:
2. Ինչողիքի՞ն են Հայաստանի երիտասարդության դիրքությունը ընտանեկան և ավելի լայն համատեսում՝ սերերի միջև հարաբերությունների ոլորտում:



## Վերարտադրողական վարժ

### Երեխաների ցանկալի բանակն ընտանիքում

Հայաստանի 18-ից 30 տարեկան երիտասարդների վերարտադրողական վարքի հենքային դիրքորոշումը գնահատվել է հետևյալ հարցով. «Քանի՞ երեխա կունենայիք, եթե բնակարանով և նյութապես բավարարված լինեիք»: Այս հարցին տրված պատասխանների բաշխումը համարվել է նույն երիտասարդների ընտանիքներում առկա երեխաների բավարարվածի հետ, որը հաշվարկվել է հետևյալ հարցին տրված պատասխաններով. «Քանի՞ հարազատ քոյլ և եղբայր ունեք» (ընտանիքում առկա երեխաների քանակը հավասար է՝ հարցին տրված պատասխանին գումարած 1) (Գծապատկեր 11.): Գծապատկերից երևում է, որ ընտանիքում երեխաների ցանկալի քանակի վերաբերյալ երիտասարդների արտահայտած դիրքորոշումները մոտավորապես կրկնում են իրենց ծնողների ընտանիքներում առկա երեխաների փաստացի քանակի բաշխումը: Եթե ընտանիքում երկու կամ երեք երեխա են ունեցել հարցված երիտասարդների ծնողների համապատասխանաբար 38.5% և 39.9%-ը, ապա այդ նույն քանակի երեխաներ են ցանկանում ունենալ երիտասարդների 33.6% և 39.4%-ը: 4 կամ 5 երեխա ունենալ ցանկացող երիտասարդների քանակը, սակայն, ավելին է, քան նրանց ծնողների՝ փաստացի նույնան երեխա ունեցած ընտանիքների քանակը:

Առկա արդյունքները ժողովրդագրական վերարտադրության ներումը նկարագրող ցուցանիշի փոխակերպելու համար ստացված բաշխումների հիման վրա երիտասարդների ծնողների ընտանիքներում<sup>9</sup> հաշվարկվել են ընտանիքի մոր պտղաբերության գործակիցը<sup>10</sup> և կնոջ պտղաբերության գործակիցը երիտասարդների դիրքորոշումներում:

Արդյունքում ստացվել է, որ եթե երիտասարդներ ունենան ճիշտ նույնքան երեխա, որքան նշել են իրենց պատասխաններում, ապա նրանց ընտանիքներում մոր պտղաբերության գործակիցը կլինի 2.92:<sup>11</sup> Երիտասարդների ծնողների ընտանիքներում կնոջ պտղաբերության գործակիցը կազմել է 2.78: Այս թիվը շատ մոտ է ՀՀ Ազգային վիճակագրության տվյալներով արտացոլված կնոջ պտղաբերության գործակիցին, որը 1970-1975թթ. ընթացքում գտնվել է [2.79; 3.16] միջակայքում (Գծապատկեր 12.):

Հայտնի է, որ ժողովրդագրական ընդլայնված վերարտադրության համար կնոջ պտղաբերության գործակիցի արժեքը պետք է մեծ լինի 2.15-ից: 1995 թվականից ի վեր Հայաստանում այն գտնվել է նշված մակարդակից ավելի ցածր, իսկ 2010 թ-ին պտղաբերության գործակիցը եղել է 1.56:

Այսպիսով՝ ըստ Հայաստանի երիտասարդների դիրքորոշումների՝ ընտանիքում երեխաների ցանկալի քանակը (կամ կնոջ պտղաբերության գործակիցը) բավարար է բնակչության քանակի բնական ընդլայնված վերարտադրության համար:


Հետևաբար ժողովրդագրական բացասական միտումների պատճառները գտնվուն են տնտեսական հարաբերությունների և դրանցով պայմանավորված մշակութային փոփոխությունների ոլորտներում:

9 Կիրառված մոտեցումն աղեկված է, քանի որ 18-ից 30 տարեկան երիտասարդների մայութը շատ մեծ հավանականությամբ աղբն դուրս են եկել իրենց ծնունակ տարիքից:

10 Պոտաբերության գործակիցը՝ կամ ծննդյան գումարային գործակիցը բնութագործ է երեխաների միջին թվաքանակը, որ կծին մեկ կինը իր ծնունակ տարիքում (15-45 տարեկան)՝ իր ողջ կյանքի ընթացքում ծննդյան տվյալ տարվա մակարդակի պահպանան դեպքում:


11 Եթե հարցվողը կին է, ապա ընտանիքի մայութ հենց նա է, իսկ եթե տղամարդ է, ապա՝ նրա կինը: Հետևաբար հաշվարկը ներառում է 18-ից 30 տարեկանների բոլոր հարավոր ընտանիքները և բոլոր ընտանիքների մայութին:

**11. Հարցվածների և նրանց ծնողների  
վերաբերող լավագության դիրքուռումներն ու վարքը:**



**12. Պեղաբերության գործակիցը Հայաստանում 1958-2010 թթ.:**

ՀՅ Ազգային վիճակագրական ծառայության տվյալներ



## Ամուսնություններ և ամուսնության վերաբերյալ դիրքություններ

Հայաստանի 18-ից 30 տարեկան երիտասարդների բաշխումը, ըստ տարիքային խմբերի և տարիքի, տրված է համապատասխանաբար Գծապատկեր 13.-ում և Գծապատկեր 14.-ում: Առաջիկա երկու տարիներին ամուսնանալու ցանկություն ունեցողների բանակն է՝ հաշվարկված չամուսնացած երիտասարդների թվից, ըստ սեռատարիքային խմբերի և տարիքի<sup>12</sup>, տրված է համապատասխանաբար Գծապատկեր 15.-ում և Գծապատկեր 16.-ում:

Այդ գծապատկերների միասնական դիտարկումը վեր է հանում Հայաստանում ժողովրդագրական իրավիճակի մի շարք կարևոր առանձնահատկություններ:

- Հայաստանի երիտասարդների շրջանում ամուսնացած չեն 27-29 տարեկանների ավելի քան մեկ երրորդը, իսկ 30 տարեկան երիտասարդներից՝ յուրաքանչյուր 4-րդը (Գծապատկեր 14.):
- Եթե 18-19 տարեկանների խմբում առաջիկա երկու տարիների ընթացքում հարաբերականորեն ավելի շատ են ամուսնանալ պատրաստվող աղջիկները, ապա 20-24 տարեկանների խմբում այդպիսի տղաների և աղջիկների քանակները հավասարվում են, իսկ 25-30 տարեկանների խմբում արդեն չամուսնացած և առաջիկա երկու տարիներին ամուսնանալ պատրաստվող տղաների հարաբերական քանակն արդեն ավելին է, քան ամուսնանալ պատրաստվող աղջիկների քանակը (Գծապատկեր 15.):<sup>13</sup>
- Չամուսնացած երիտասարդների շրջանում, սկսած 29 տարեկանից, առաջիկա երկու տարիներին ամուսնանալու ծգտումը սկսում է նվազել (Գծապատկեր 16.):


Այսպիսով՝ Հայաստանի ժողովրդագրական վիճակի շտկման առումով նշանակալի ռեզերվ է մինչ 30 տարեկանը չամուսնացած երիտասարդների շոշափելի քանակը՝ յուրաքանչյուր տարիքային կողորտայի 25%-ը:<sup>14</sup>

12 Վերլուծությունը միայն տարիքային կատեգորիաներով տալիս է առարկայի վերաբերյալ ընդհանրացված պատկերացում, սակայն իրավիճակի բովանդակային ընկալման տեսակետից երբեմն «բաքցնում է» կարևոր մանրանամերը:


13 Քանի որ տվյալները ներկայացված են չամուսնացած ամենաց թվով, հետևաբար ժամանակային միտումները չեն կարող բացատրվել ժամանակի ընթացքում չամուսնացածների քանակի նվազմամբ: Դրանք արտահայտում են երիտասարդության շրջանում առկա վերաբերադրողական ընդհանուր վարքից շնորհող դիրքորոշումներով ենթաշերտերի առկայության մասին:

14 Տարիքային կողորտան որոշակի տարվա ընթացքում ծնված անձանն քանակն է:


**13. Ամուսնացած երիտասարդներն ըստ տարիքային խմբերի:**




**14. Ամուսնացածների բաշխումը ըստ տարիքի:**



**15. Ծամուսնացած երիտասարդները, ովքեր դաշտասվում են ամուսնանալ առաջիկա 2 տարիների ընթացքում:**



**16. Ծամուսնացած երիտասարդները, ովքեր դաշտասվում են ամուսնանալ առաջիկա 2 տարիների ընթացքում:**



## Չամուսնանալու դասձառները

Չամուսնացած երիտասարդների՝ առաջիկա երկու տարիների ընթացքում ամուսնություն չպահանջելու պատճառները, ըստ տիպի, սեռի և տարիքի, տրված են Աղյուսակ 7.-ում:

### 7. Հայաստանի երիտասարդների չամուսնանալու դասձառները:

Չամուսնանալու պատճառները	18-19	20-24	25-30	Արական	Իգական
<b>Մշակութային պատճառներ</b>					
1. Տարիքի պատճառով, դեռ չուտ է	24.9%	15.7%	16.4%	17.8%	23.0%
2. Սովորում ե/մտածում է ուսման մասին	22.3%	10.0%	2.7%	7.8%	25.4%
3. Ծառայում ե/բանակ է գնալու	14.9%	1.0%	-	11.4%	-
4. Ընտրյալ չունի/հարմար թեկնածու չկա	6.7%	14.9%	18.6%	6.8%	19.5%
5. Ուզում է ազատ ապրել/չի ցանկանում	5.8%	13.5%	22.5%	11.2%	10.9%
6. Պատրաստ չէ/դեռ մտադրություն չունի	2.3%	4.0%	4.7%	2.8%	4.1%
7. Ժամանակ չունի	1.3%	0.9%	4.7%	1.6%	1.3%
8. Ինքնահաստատված չէ/կայացած չէ	0.9%	4.2%	-	3.3%	1.8%
9. Մտածում է կարիերայի/գործի մասին	0.7%	1.2%	0.9%	0.4%	1.9%
10. Պատրաստվում է Հայաստանից մեկնել	0.3%	1.0%	2.3%	0.2%	1.9%
11. Իրենից առաջ ամուսնացող կա	-	1.3%	-	1.0%	-
<b>Ընդամենը՝ մշակութային պատճառներ</b>	<b>80.1%</b>	<b>67.7%</b>	<b>72.8%</b>	<b>64.3%</b>	<b>89.8%</b>
<b>Տնտեսական պատճառներ</b>					
1. Աշխատանք չունի/նորմալ աշխատանք չունի	12.0%	14.8%	5.5%	16.3%	-
2. Ֆինանսական/սոցիալական խնդիրներ	5.7%	10.8%	13.8%	14.3%	1.0%
3. Առանձին/սեփական տուն չունի/տունը փոքր է	1.5%	2.1%	1.9%	3.0%	6.6%
<b>Ընդամենը՝ տնտեսական պատճառներ</b>	<b>19.2%</b>	<b>27.7%</b>	<b>21.2%</b>	<b>33.6%</b>	<b>7.6%</b>
<b>Ընդամենը</b>	<b>99.3%</b>	<b>95.4%</b>	<b>94.0%</b>	<b>97.9%</b>	<b>97.4%</b>


Ընդամենը տողում տվյալները հավասար չեն 100%-ի, քանի որ բաց են թողնված աննշան տոկոսներ՝ ստացած իրավիճակային չխմբավորված պատճառները:

Աղյուսակի տվյալներից բխում է՝

- Երիտասարդության շրջանում ավելի տարածված են չամուսնանալու մշակութային, այլ ոչ թե տնտեսական պատճառները:
- Չամուսնանալու տնտեսական պատճառներն առավելապես բնորոշ են տղամարդկանց, իսկ մշակութային պատճառները՝ կանանց: Տղամարդկանց շրջանում մշակութային և տնտեսական պատճառների տարածվածության հարաբերակցությունը 2 : 1 է, իսկ կանանց շրջանում՝ 11 : 1:
- Տարիքին գուցահետ՝ որպես չամուսնանալու պատճառ տղամարդկանց շրջանում մի կողմից նվազում է «աշխատանք չունեմ» պատճառը, մյուս կողմից աստիճանաբար աճում է «ֆինանսական և սոցիալական չլուծված խնդիրների» տարածվածությունը: Այս իրողությամբ արտահայտվում է Հայաստանի տնտեսության ցածր արտադրողականության ազդեցությունը, եթե անձն ունի աշխատանք, սակայն դրա դիմաց վարձատրությունն անբավարար է՝ ընտանիքին հասարակայնորեն ընդունելի կենսամակարդակ ապահովելու համար:

- Տարիքին զուգահեռ՝ նվազում է «սովորելու»՝ որպես ամուսնությունը հետաձգելու պատճառը, սակայն միաժամանակ աճում է դրա «ստվերային» ասպեկտը՝ «հարմար թեկնածու չկա» պատճառը: Ընդ որում՝ վերջինս առավելապես «կանանցի» պատճառ է: Դա իր հերթին երիտասարդ կանանց շրջանում վերածվում է այլ ազգերի և հայերի երնորդակութային խնդերի ներկայացուցիչների հետ ամուսնության նկատմամբ հանդուրժողականության աճի գործոնի (Գծապատկեր 17.):
- «Ազատ ապրելու» դիրքորոշումը հավասարապես բնորոշ է և տղամարդկանց, և կանանց: Այդ մշակութային գործոնի ազդեցությունը զգացվում է համեմատաբար ավելի ավագ տարիքում:

 **17. «Կընդունեի՞՛՛, եթե Ձեր եղբայրը/  
քոյլը, տղան/աղջիկը ստունանար...»:**



## Ամուսնացած երիտասարդների տքանում երեխաներ չղլանավորելու դասձառները

Ժողովրդագրական խնդիրների լուծման մյուս «տիրույթն» ընտանիքներում երեխաների փոքր քանակն է: Այդ հարցի ուսումնասիրության համար դիտարկել են ամուսնացած երիտասարդների շրջանում առաջիկա երկու տարիների ընթացքում երեխա չղլանավորելու պատճառները: Դրանք և դրանց դասակարգումը, ըստ սեռի և տարիքի, տրված են Աղյուսակ 8.-ում:

### 8. Երեխա չղլանավորելու դասձառներ:

Երեխա չղլանավորելու պատճառները	20-24	25-30	Արական	Իգական
<b>Տնտեսական պատճառներ</b>				
Ֆինանսական խնդիրներ, սոցիալական խնդիրներ	30.8%	24.3%	37.8%	21.9%
Առանձին/սեփական տուն չունի, փոքր է	3.1%	2.7%	-	3.5%
Աշխատանք չունի/նորմալ աշխատանք չկա	1.6%	1.7%	2.0%	1.5%
<b>Ընդամենը՝ տնտեսական պատճառներ</b>	<b>35.5%</b>	<b>28.7%</b>	<b>39.8%</b>	<b>26.9%</b>
<b>Սոցիալական պատճառներ</b>				
Երեխաները դեռ փոքր են	15.1%	16.3%	15.8%	18.6%
Առողջական խնդիրների պատճառով	8.6%	1.7%	2.0%	4.2%
<b>Ընդամենը՝ սոցիալական պատճառներ</b>	<b>23.7%</b>	<b>18.0%</b>	<b>17.8%</b>	<b>22.8%</b>
<b>Մշակութային պատճառներ</b>				
Արդեն երկու երեխա ունի	18.0%	30.9%	22.5%	28.0%
Արդեն մեկ երեխա ունի	13.7%	14.8%	12.7%	14.4%
Կենտրոնացած է աշխատանքի/կարիերայի վրա	1.8%	2.3%	0.7%	2.5%
4 երեխա ունի		1.2%	-	1.1%
<b>Ընդամենը՝ մշակութային պատճառներ</b>	<b>33.5%</b>	<b>49.2%</b>	<b>35.9%</b>	<b>46.0%</b>
<b>Ընդամենը</b>	<b>92.7%</b>	<b>95.9%</b>	<b>93.5%</b>	<b>95.7%</b>

Աղյուսակի տվյալները հաճգեցնում են հետևյալ եզրակացություններին:

- Ամուսնացած երիտասարդների կողմից երեխաներ չղլանավորելու դեպքում նորից առավել տարածված են մշակութային պատճառները (ընտանիքն «արդեն ունի երկու երեխա», «արդեն ունի մեկ երեխա»):
- Ամուսնացածների ընտանիքներում երեխաների քանակի ավելացման շարունակական խոչընդոտ է ընտանիքների սոցիալական և տնտեսական անբարեկեցիկ վիճակը: Ընդ որում՝ այդ պատճառը թույլ է շաղկապված տարիքի հետ. ամուսնացած լինելու փաստը «հավասարեցնում» է տարիքային տարրեր խմբերի երիտասարդներին:
- Ընտանիքի սոցիալական և ֆինանսական վիճակը՝ որպես երեխաներ չղլանավորելու պատճառ, ինչպես և ամուսնության հետաձգման դեպքում, առավելապես «սողամարդկային» պատճառ է:
- Ընտանիքում արդեն առկա (մեկ կամ երկու) երեխաները՝ որպես երեխաներ այլևս չղլանավորելու պատճառ, թույլ է շաղկապված հարցվողի սերի հետ: Այս փաստը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. որպես կանոն, ամուսնական գույց են կազմում միկնույն մշակութային տիպին պատկանող անձինք, ինչի հետևանքով երեխաներ ունենալու կամ չունենալու հետ կապված դիրքորոշումները նույնանոն, որպես կանոն, համընկնում են:

- Բավականին անհանգստացնող փաստ պետք է համարել երիտասարդ հասակում ամուսնության հետաձգումը «առողջական խնդիրների պատճառով»:<sup>15</sup>

Այսպիսով՝ Դայաստանի ժողովրդագրական վիճակի շտկման համար անհրաժեշտ են ոչ միայն ամուսնությանը նպաստող տնտեսական պայմանների բարելավում, այլև այնպիսի ռազմավարությունների մշակում, որոնք համահունչ կլինեն ներկայումս ընթացող մշակութային փոփոխություններին:

## Ընտանեկան հարաբերություններ

Ամուսնության և երեխաներ ունենալու վերաբերյալ դիրքորոշումներում մշակութային գործոնների ազդեցության գերակայությունից բխում է, որ երիտասարդության շրջանում տեղի են ունենում ընտանիքում և հասարակությունում կնոջ դերի և ազատության աստիճանի փոփոխություններ, որոնք արտահայտվում են և ընտանիքում, և ընտանիքից դուրս: Դեռևսաբար անհրաժեշտ է ուսումնասիրել այդ փոփոխությունների բնույթը և դիմանմիկան:

Այս ենթաբաժնում դիտարկվում են ընտանեկան հարաբերությունների և կնոջ հասարակական վարքի հետ կապված հետևյալ հարցերը.

1. Ո՞վ պետք է լինի ընտանիքի գլխավորը,
2. Դիրքորոշումներն ընտանեկան հարցերում,
3. Դիրքորոշումներն ամուսնալուծության վերաբերյալ,
4. Ինչպիսի՞ն են երիտասարդների դիրքորոշումները կնոջ հասարակական վարքի ազատության, մասնավորապես նաև արտահանունական ոլորտի վերաբերյալ:

## Ո՞վ դեմք է լինի ընտանիքի գլխավորը

«Ո՞վ պետք է լինի ընտանիքի գլխավորը» այն հիմնական դիրքորոշումն է, որն իր մեջ խտացնում է ավանդականությունն ընտանեկան հարցերում: Այդ ընդհանուր դիրքորոշումն ունի իրենից բխող և միաժամանակ իրեն բովանդակություն հաղորդող բաղադրիչներ:


Դայաստանի երիտասարդության շրջանում ներկայում ընդհանուր առնամք գերիշխում են ավանդական դիրքորոշումները: Այդուհանդերձ, այդ հարցում տղամարդկանց և կանանց դիրքորոշումներն արդեն էականորեն տարբերվում են (Գծապատկեր 18.): Եթե տղամարդկանց 95.3%-ն է համարում, որ ընտանիքի գլխավորը պետք է լինի տղամարդը, ապա կանանց շրջանում այդ տոկոսը կազմում է 87.5: Բնականաբար, տղամարդու դերն ավելի բարձր է գնահատվում գյուղերում (Գծապատկեր 19.), իսկ այդ հարցում երիտասարդության առավել ազատական շերտն ուսանողությունն է:

Ընտանիքի գլխավորի վերաբերյալ ավանդական դիրքորոշումն ունի երկու հիմնական բաղադրիչ: Առաջինը՝ ընտանիքում գլխավոր պետք է լինի ամուսինը, և երկրորդը՝ ընտանիքում գլխավոր պետք է լինի «տարիքով ավագը»՝ առավելապես ավագ տղամարդը, սակայն չի բացառվում նաև, որ տարիքով ավագ կինը լինի: Երկրորդ դիրքորոշումն ավելի տարածված է տղամարդկանց շրջանում (Գծապատկեր 20.): Երիտասարդության շրջանում, սակայն, արդեն առկա է 7.5% կազմող մի շերտ, որը համարում է, որ ընտանիքում ամուսինները պետք է հավասար լինեն: Ընդ որում՝ այդպիսի դիրքորոշում ունեն առավելապես երիտասարդ կանայք (11.1%) (Գծապատկեր 20.):

15 Այդ խնդիրները սույն գեկույցի մեջ չեն ընդգրկվել: քանի որ Դայաստանուն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից 2010 թ-ին հրականացվել է Դայաստանի ժողովրդագրական առողջապահական երրորդ ընդգրկուն նախագծուագրված հետազոտությունը (առաջինն իրականացվել է 2000 թ-ին, իսկ երկրորդը՝ 2005 թ-ին), որում պարունակվում են երիտասարդների (ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց) վերաբերողական առողջության հետ կապված բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ նաև առաջնային և երկրորդային ամպտղության տարածվածությունը և պատճառները:


18. «Ո՞վ ուսէ՞ և լինի ընտանիքի գլխավորը» (ըստ սեռի):

Տրված է «Ամուսինը», «Տարիքով մեծերը», «Տղամարդը» պատասխանների գումարը:




19. «Ո՞վ ուսէ՞ և լինի ընտանիքի գլխավորը» (ըստ բնակչայրի ժողի և ուսանողների):

Տրված է «Ամուսինը», «Տարիքով մեծերը», «Տղամարդը» պատասխանների գումարը:



20. «Ո՞վ ուսէ՞ և լինի ընտանիքի գլխավորը»:



## Կնոջ դերն ընտանիքում և հասարակական գործունեության մեջ

Այս իրողության վերաբերյալ, թե երիտասարդներն ինչպես են տեսնում կմոց դերն ընտանեկան և հասարակական տարրեր իրավիճակներում, մոտավոր պատկերացում կազմելու համար ներկայացվել են մի շարք դրույթներ, որպեսզի երիտասարդները դրանց նկատմամբ արտահայտեն իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը:

Դրույթների միջոցով ուսումնասիրվող կոնցեպտները և դրանք արտապատկերող իրավիճակները տրված են Այսուսակ 9.-ում:

### 9. Դրույթներ և դրանք արտապատկերող իրավիճակներ:

#### Ուսումնասիրվող կոնցեպտները

Գերակա է ավանդակա՞ն, թե՞ նուկեար ընտանիքը:

Արդյոք գերակա է մաս՞ւմ պատրիլուկալ ընտանիքը:

Արդյո՞ք շարունակում է ավանդական մնալ արու ժառանգի գերակայությունը:<sup>16</sup>

Կնոջ աշխատելու դիրքորոշման մեջ գերակա է տնտեսակա՞ն, թե՞ մշակութային հիմքը:

Ո՞ր դերն է կմոց համար գերակա՝ հասարակակա՞ն, թե՞ ընտանեկան:

Ընդունելի՞ է արդյոք կմոց առաջնորդությունը հասարակական/աշխատանքային հարաբերություններում:

Ընդհանուր դիրքորոշումը տղանարող և կնոջ հավասարության վերաբերյալ:

Ինչպիսի՞ն է կյանքի գերակայության նկատմամբ դիրքորոշումը:

#### Կոնցեպտներն արտապատկերող իրավիճակը

Որտե՞ղ պես է ապրի երիտասարդ ընտանիքը՝ ծնողների հե՞տ, թե՞ առանձին:

Ընդունելի՞ է արդյոք, որ երիտասարդ ընտանիքն ապրի կմոց ծնողների տանը:

Հավասար կմոց արդյոք տղա և աղջիկ ժառանգները:

Ընդունելի՞ է արդյոք կմոց աշխատանքը:

Արդյո՞ք կմոց կարիերան/հասարակական դիրքը գերակա են նրա ընտանեկան դերի նկատմամբ:

Ընդունելի՞ է արդյոք կմոց նեկավար դերը հասարակական/աշխատանքային հարաբերություններում:

Արդյո՞ք տղանարող կնոցից ավելի խելացի է:

Թույլատրելի՞ է արդյոք արտաամուսնական արորտը:

Արորտն արդյոք թույլատրելի՞ է ընտանիքի պլանավորման ոլորտում:


Դրույթների հարցաթերթային ձևակերպումներն ու ստացված պատասխանների բաշխումները, ըստ սեռի, տրված են Գծապատկեր 21.-ում:

Պատասխանների բաշխումից բխում է, որ Հայաստանի երիտասարդության շրջանում ընտանեկան և հասարակական հարցերում, սեռերի միջև հարաբերությունների ոլորտում մոտավորապես նույն չափով առկա են ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից դիրքորոշումներ: Սակայն, ինչպես և այլ ազգերի ու հայերի թեմոնշակութային խմբերի ներկայացուցիչների հետ ամուսնության նկատմամբ առկա դիրքորոշումներում, այնպես էլ այս պարագայում կանանց էնանսիպացիոն դիրքորոշումները գերազանցում են տղանարդկանց դիրքորոշումներին:

Դա հատկապես արտահայտիչ է կնոջ աշխատելու հետ կապված հարցում: «Եթե նույնիսկ ամուսնու աշխատավարձը բարձր է, ապա գերադասելի է, որ կինն աշխատի» հարցին դրական են պատասխաններ տղանարդկանց 51.7%-ը, իսկ կամանց՝ 86.2%-ը:

16 Պատրիլուկալ է կոչվում այն ընտանիքը, որն ապրում է ամուսնու ծնողների հետ: Մատրիլուկալ է կոչվում այն ընտանիքը, որն ապրում է կմոց ծնողների հետ:

**21. Դրոյքների հարցաքերթային ձևակերպումներն ու սազված լատասխանների բաշխումներն ըստ սեռի:**



Հատ մեծ է նաև կանանց շրջանում ծնողներից առանձին ապրելու դիրքորոշումը. Երեք երիտասարդ կանանցից երկուսը գերադասում են, որպեսզի ընտանիքը ծնողներից առանձին ապրի:

Դայաստանի երիտասարդության շրջանում բավականին թուլացել է հայկական ընտանիքին ավանդաբար բնորոշ «պատրիլոկալության» դիրքորոշումը: «Եթե ընտանիքը բնակարան չունի, ապա կարելի է ապրել նաև ծնողների տանը» դրույթի հետ համաձայն են կանանց 54.4%-ը, իսկ տղամարդկանց դեպքում՝ 30.4%-ը:

Յուրաքանչյուր երրորդ երիտասարդ աղջկա համար երիտասարդ հասակում կարիերան ավելի գերակա է, քան ընտանիքը: Տղամարդկանց շրջանում այդպիսի դիրքորոշում ունի յուրաքանչյուր իմացերորդը:

Երիտասարդների շրջանում դեռևս բավականին բարձր է մնում իրենց մտավոր ունակությունների գերազանցության դիրքորոշումը կանանց նկատմամբ (այդպես են մտածում երիտասարդ տղամարդկանց 68.5%-ը), ինչը, սակայն, վիճարկվում է կանանց կողմից (այդպես են մտածում կանանց 35.9%-ը):

Գծապատճերի տվյալներից երևում է, որ սեռերի հավասարության հետ կապված բոլոր հարցերում երիտասարդ կանայք ավելի են հակված հավասարությանը, քան տղամարդիկ:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ չամուսնացած կանանց համար արդրտը հարաբերականորեն թույլատրելի են համարում տղամարդիկ, իսկ ամուսնացած կանանց համար՝ կանայք:

Այսինքն՝ Դայաստանի երիտասարդության շրջանում ավանդական հարաբերությունների շրջանակից ձերբագատման գործընթացն առաջնորդում են երիտասարդ կանայք:


Ընտանեկան հարցերի հաջորդ կարևոր շրջանակն ամուսնալուծությունն է: Ուսումնասիրվել է այն հարցը, թե ամուսնալուծության համար ո՞՞ր իրավիճակները կարող են լուրջ կամ շատ լուրջ հիմք համարվել: Այդ իրավիճակները և դրանց գնահատականները տրված են Գծապատճեր 22.-ում:

Ամուսնալուծության լուրջ հիմքի վերաբերյալ ամենատարածված դիրքորոշումը կնոց անհավատարմությունն է: Դրան հետևում են այն իրավիճակները, որոնք իր ֆունկցիաների կատարման գործում իրապես խանգարում են ընտանիքին: Դրանք են՝ ամուսնու թմրանոլությունը, ամուսնու խաղամոլությունը, կնոջ պարբերաբար բռնության ենթարկելը:

Դարկ է նշել, որ չնայած սոցիալական խիստ անբարեկեցիկ իրավիճակը՝ որպես ամուսնալուծության լուրջ հիմք, դիտարկվածների շարքում ամենից քիչն է տարածված, սակայն դրա առանձին դիտարկման դեպքում մեկնարարանության երանգը փոխվում է: Ըստ էության, տղամարդկանց 26.4%-ի, իսկ կանանց 34.1%-ի համար սոցիալական խիստ անբարեկեցիկ պայմաններն ամուսնալուծության լուրջ հիմք են:

Կանանց և տղամարդկանց շրջանում ամուսնալուծության հիմքերի դիտարկումը նորից ի հայտ է բերում այն իրողությունը, որ կանանց մոտ ավելի ուժեղ են արտահայտված այն դիրքորոշումները, որոնք հասարակությանը դուրս են բերում ավանդականության շրջանակներից:

## 22. «Որքա՞ն լուրջ հիմք կարելի է համարել հետևյալ դեղությար ամուսնալուծության համար»:



## Կնոջ հասարակական վարքը

Հասարակության ավանդականության ասպեկտներից է հասարակական վարքի տարրեր բաղադրիչների թույլատրելիության աստիճանը տղամարդու և կնոջ համար: Առավել բնութագրական են սեռերի միջև հարաբերությունների հետ կապված հարցերը: Այդ տեսակետից ավանդական հասարակություններում շատ ավելի խիստ սահմանափակումներ են նախատեսված կանանց, քան տղամարդկանց համար: Հաճախ այդ սահմանափակումները վերածվում են տարբուների:


Դետագուտությամբ ուսումնասիրվել են, թե ինչպիսին են Հայաստանի երիտասարդության դիրքորոշումները կնոջ հասարակական վարքի ազատության աստիճանի վերաբերյալ: Դրա համար կիրառվել է հետևյալ հարցախումբը.

«Զեր կարծիքով՝ ո՞ր տարիքից է աղջկա/կնոջ համար ընդունելի...»

1. Ծխելը,
2. Թույլ ալկոհոլ (գարեջուր, գինի, շամպայն) օգտագործելը,
3. Նախքան ամուսնանալը ծնողներից առանձին ապրելը,
4. Առանց ամուսնանալու տղամարդու հետ ապրելը,
5. Առանց ամուսնանալու երեխա ունենալը»:

Որպես պատասխանի տարբերակ կարելի էր նշել նաև «Թույլատրելի չեղանակ» պատասխանը: «Թույլատրելի չեղանակ» պատասխաններ տված անձանց քանակը, ըստ սեռի, տրված է Գծապատկեր 23.-ում:

### 23. Որոշակի տարիքից կնոջ համար տված վարժային քաղաքրիչը թույլատրելի համարող երիտասարդների հանակը:



«Նախքան ամուսնանալը ծնողներից առանձին ապրելը» թույլատրելի են համարում երիտասարդների մոտ մեկ երրորդը: «Նախքան ամուսնանալը տղամարդու հետ ապրելը» թույլատրելի է համարում կանանց մեկ հինգերորդը, իսկ տղամարդկանց դեպքում՝ մեկ քառորդը: Ընդ որում՝ կանայք «Նախքան ամուսնանալը ծնողներից առանձին ապրելը» համեմատաբար ավելի են գերադասում, իսկ տղամարդիկ՝ կնոջ՝ «Առանց ամուսնանալու տղամարդու հետ ապրելը»:

Մյուս կողմից Հայաստանի երիտասարդները (և տղամարդիկ, և կանայք) կնոջ համար առավել անընդունելի են համարում «Ծխելը», ինչը նախորդ դրույթների համատեքստում պետք է մեկնարածել որպես ավանդական հասարակությունից ծերբագատվել ծգտողների կողմից հասարակական «քարբերի մաքրության» նկատմամբ իրենց նվիրվածությունն ընդգծող մշակութային քողածածկույթ:

Գծապատկեր 24.-ում ներկայացված է այն միջին տարիքը, որ կանանց համար դիտարկված վարքագծային բաղադրիչները թույլատրելի են համարում այն անձինք, ովքեր դրանց սկզբունքորեն դեմ չեն:


Կնոջ հասարակական վարքի տեսակետից Հայաստանի երիտասարդության դիրքորոշումներն ընդհանրացնելու համար կառուցվել է «ավանդականության ինդեքս»: Դարցվողի ավանդականության ինդեքսը հավասար է նրա կողմից կնոջ համար որոշակի տարիքից թույլատրելի վարքային բաղադրիչների քանակին: Ինդեքսի արժեքները փոխվում են [0; 5] միջակայքում: Ինդեքսի 0 արժեքը նշանակում է, որ անձը որոշակի տարիքից կնոջ համար թույլատրելի է համարում դիտարկված վարքագծային բոլոր բաղադրիչները (առավել ազատական դիրքորոշում), իսկ ինդեքսի 5 արժեքը նշանակում է, որ անձը կնոջ համար անթույլատրելի է համարում դիտարկված վարքագծային բոլոր բաղադրիչները՝ անկախ տարիքից (առավել ավանդական դիրքորոշում):

Հայաստանի երիտասարդության շրջանում ինդեքսի արժեքների բաշխումը տրված է Գծապատկեր 25.-ում, իսկ տղանաբույսանց և կանանց համար առանձին՝ Գծապատկեր 26.-ում:


Ինդեքսի արժեքների վերլուծությունից բխում են հետևյալ եզրակացությունները.

1. Կնոջ վարքագծի սահմանափակումների տեսակետից Հայաստանի երիտասարդության դիրքորոշումներն ունեն ավանդականության բավականին բարձր աստիճան: Երիտասարդների 80%-ի դիրքորոշումները գտնվում են ավանդականության բարձր արժեքների տիրույթում, իսկ 20%-ը՝ ցածր արժեքների (կամ կնոջ «լիբերալ» վարքի) տիրույթում:

☒ 24. «Ձեր կարծիքով՝ ո՞ր տարիքից է առջևա/կնոջ համար ընդունելի...»:



☒ 25. Ավանդականության ինդեքսի բաշխումը երիտասարդների շրջանում:



2. Ամենաազատական երիտասարդական շերտը կազմում է երիտասարդների ընդհանուր քանակի մոտ 5%-ը, առավել ավանդականը՝ մոտ 11%-ը:
3. Կնոջ վարքի ազատականացումը նույնպես, ինչպես և ընտանեկան արժեքների և հայերի էթնոմշակութային խճերի նկատմամբ հանդուրժողականության տեսանկյուններից, ընթանում է կանանց «նախաձեռնությամբ»: Ազատականության ամենաբարձր արժեքներն ունի տղամարդկանց 3.8%-ը, իսկ կանանց դեպքում՝ 7.1%-ը, ավանդականության ամենաբարձր արժեքներն էլ ունի տղամարդկանց 13.8%-ը, իսկ կանանց պարագայում՝ 8%-ը:

 26. Ավանդականության ինդեքսի բաշխումը  
կանանց և տղամարդկանց շրջանում:



### 3. Տնտեսական վարժ

Նախորդ բաժնում Երիտասարդության վերաբերող գործականության վարժի բաղադրիչների ուսումնասիրությունը ցույց սկսեց, որ նրանց ամուսնության և երեխաներ ունենալու դիրքուում առկա են նաև սոցիալ-տնտեսական գործունեություններ: Այս բաժնում դիտարկվում են Երիտասարդության զբաղվածության և տնտեսական վարժի հետ կապված հարցերը, որոնց բվում՝

1. Տնտեսական ակտիվությունը՝ զբաղվածությունը, գործազրկությունը,
2. Երիտասարդության դիրքուում վարձու աշխատանքի և բիզնեսով զբաղվելու գերակայությունները,
3. Երիտասարդության ընդհանուր զնահատականները հայաստանում բիզնես միջավայրի և դրա առանձնահատկությունների վերաբերյալ:



## Տնտեսական ակտիվություն

Զբաղվածության նկարագրության հիմնական հասկացությունները են.

- Աշխատանքային ռեսուրսները՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության սահմանմանը՝ հասարակության 15-ից 75 տարեկան աշխատունակ բնակչությունը,
- Տնտեսապես ակտիվ բնակչությունը, որը ստորաբաժանվում է գրադադարների և գործադրությունների,<sup>17</sup>
- Տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը:

## Զբաղվածություն և գործազրկություն

Հետազոտության տվյալներով՝ Յայաստանի 18-ից 30 տարեկան երիտասարդների շրջանում զբաղվածները կազմում են 48.7%, գործազրկները՝ 18.7%<sup>18</sup>, իսկ տնտեսապես ոչ ակտիվ հատվածը՝ 32.6% (Գծապատկեր 27.): Երիտասարդության շրջանում գործազրկների քանակն ավելի մեծ է, քան Յայաստանի Յանրապետությունում ընդհանրապես գործազրկների քանակը:<sup>20</sup> Գործազրկության մակարդակը երիտասարդության շրջանում կազմել է 27.8%, և դա այն դեպքում, երբ հանրապետության մասշտարով 2011 թ-ի սեպտեմբերին այն հավասար էր 20.7%-ի:<sup>21</sup>

Ստորև ներկայացված են Յայաստանի 18-ից 30 տարեկան աշխատանքային ռեսուրսների շրջանում զբաղվածների, գործազրկների և տնտեսապես ոչ ակտիվ բնակչության բաշխումներն ըստ տարիքի (Գծապատկեր 27.), սեռի (Գծապատկեր 28.), բնակավայրի տիպի (Գծապատկեր 29.), երիտասարդի ընտանիքի բարեկեցության (Գծապատկեր 30.), կրթության (Գծապատկեր 31.) և բուհերում կամ միջին մասնագիտական հաստատություններում ստացած մասնագիտության (Գծապատկեր 32.): Տվյալների դիտարկման ընթացքում հարկ է դրանք համեմատել երիտասարդության շրջանում գործազրկների միջին մակարդակի հետ՝ 18.7%:

17 Աշխատանքի միջազգային կազմակերպության սահմանմանը՝ գործազրկում 15-ից 75 տարեկան աշխատունակ այն անձններ, ովքեր հետազոտվող ժամանակաշրջանում չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղնունք, հետազոտությանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում աշխատանք են փնտրել ցանկացած եղանակով և երկու շաբաթվա ընթացքում պատրաստ են եղել աշխատանքի անցնելուն: Տե՛ս՝ «Յայաստանի վիճակագրական տարեգիրք 2011», էջ 51:


18 Դարկ է տարբերակը՝ գործազրկների քանակ և գործազրկության մակարդակ հասկացությունները: Առաջնը գործազրկների տոկոսն է բնակչության դիտարկվող խմբում, իսկ երկրորդը՝ բնակչության տվյալ խմբում գործազրկների քանակը հարաբերակցությունը նույն խմբում հաշվառված գործազրկների և զբաղվածների քանակին: Ակնհայտ է, որ երկրորդը միշտ ավելի մեծ է առաջինից կամ հավասար է:

19 Տնտեսապես ոչ ակտիվ են այն անձններ, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն աշխատում, սակայն աշխատանք չեն փնտրում կամ երկու շաբաթվա ընթացքում չեն անցնի աշխատանքի (այսինքն՝ չեն դասակարգվում որպես գործազրկություն):


20 Ըստ «Այ Փի Էս Մի» սոցիոլոգիական և քաղաքական խորհրդատվությունների՝ 2011 թ-ի սեպտեմբերին իրականացրած հետազոտության տվյալների՝ Յայաստանի Յանրապետությունում 18 և ավելի տարիքի բնակչության 15.1%-ը գործազրկություն է:

21 Ըստ «Այ Փի Էս Մի»-ի նույն հետազոտության:


**27. Զբաղվածության կարգավիճակների բաշխումն ըստ տարիքի:**



**28. Զբաղվածության կարգավիճակների բաշխումն ըստ սեռի:**




**29. Զբաղվածության կարգավիճակների բաշխումն ըստ քաղաքավայրի և տարածքի:**




■ Անտեսապես ոչ ակտիվ  
■ Գործազուրկ  
■ Զբաղված

**30. Զբաղվածության կարգավիճակների բաշխումն ըստ բարեկեցության:**




■ Անտեսապես ոչ ակտիվ  
■ Գործազուրկ  
■ Զբաղված

 **31. Զքաղվածության կարգավիճակների բաւհումն ըստ կրթության:**



 **32. Զքաղվածության կարգավիճակների բաւհումն ըստ մասնագիտության:**




- 18-ից 30 տարեկան երիտասարդների տարիքային ենթախմբերում գործազրկությունն ամենաբարձրն է 20-24 տարեկանների շրջանում: Նրանց կազմում գործազրուկ է 23.4%-ը: Տնտեսապես ոչ ակտիվ հատվածն էլ (52.6%) առավել բարձր է 18-19 տարեկանների շրջանում:
- Կամաց շրջանում գործազրկությունը (20.1%) փոքր-ինչ գերազանցում է տղամարդկանց գործազրկությանը (17.4%), սակայն կամաց շրջանում անհամեմատ ավելի բարձր է տնտեսապես ոչ ակտիվ հատվածը (49.3%):
- Ըստ բնակավայրի տիպի՝ գործազրկությունն ամենաբարձրն է Երևան քաղաքում (22.8%): Գյուղերում այն համեմատաբար ավելի ցածր է (13.1%), քանի որ գյուղական բնակչությունն ունի սեփական հող և հետևաբար առավելապես պատկանում է ինքնազբաղվածների կատեգորիային:
- Ընտանիքի բարեկեցության մակարդակի տեսանկյունից գործազրկությունն առավել բարձր է ամենաամբարեկեցիկ խմբում, որտեղ ընտանիքի եկամուտը ցածր է ամսական 100.000 դրամից (21.3%), և ամենացածրն է ամենաբարեկեցիկ խմբում, որտեղ ամսական եկամուտը բարձր է 500.000 դրամից (10.6%):
- Կրթամակարդակի տեսակետից գործազրկությունն ամենաբարձրն է բարձրագույն կրթությամբ (բակալավրի աստիճանով) երիտասարդների շրջանում (25.8%), ինչն արտացոլում է այն իրողությունը, որ հասարակությունում առկա է այդ կրթամակարդակով, սակայն տնտեսության կողմից չպահանջված մասնագետների գերարտադրություն:
- Ըստ բարձրագույն կրթությամբ մասնագիտական ստորաբաժնման՝ գործազրկության մակարդակն ավելի բարձր է տեխնիկական գիտությունների գծով բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում (24.7%):
- Գործազրկության մակարդակն ամենաբարձրն է 18-19 տարեկանների շրջանում՝ 42.4% (Գծապատկեր 33.), զբաղվածների անենամեծ խումբն են կազմում «երկարատև պայմանագրով վարձու աշխատողները» (այդ կատեգորիայի անձանց՝ 32%-ը):


Գործազրկության մակարդակի տվյալները պատկերացում են տալիս պոտենցիալ սոցիալական լարվածության վերաբերյալ: Տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդներն աշխատանք չեն փնտում, հետևաբար ավելի մեծ հավանականությամբ ունեն ապրուստի միջոցներ, քան նրանք, ովքեր չեն աշխատում, սակայն աշխատանք են փնտում, այսինքն՝ գործազրկությունը:

- Գործազրկության մակարդակը, ըստ տարիքային խմբերի, ամենաբարձրն է 18-19 տարեկանների խմբում՝ 42.4% (իշխնք, որ հանրապետության մասշտաբով 18-ից 30 տարեկանների շրջանում գործազրկության միջին մակարդակը 27.8% է):
- Գործազրկության մակարդակը շատ բարձր է կամանց շրջանում՝ 39.7%: Չի բացառում, որ դա այն կարևոր գործուներից մեկն է, որն ամուսնությունների հարցում նպաստում է կամանց հանդուրժողականության մակարդակի աճին:
- Երևանում երիտասարդական գործազրկության մակարդակը 33.8% է:
- Դարկ է ուշադրություն դարձնել այն հանգանանքին, որ եթե գործազրկությունն ավելի բարձր է տեխնիկական մասնագիտությունների գծով բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում, ապա գործազրկության մակարդակն ավելի բարձր է հումանիտար մասնագիտություններով բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում, ինչը նշանակում է, որ հումանիտար մասնագիտությունների գծով բարձրագույն կրթությամբ մասնագետների գերարտադրությունը հարաբերականորեն (տնտեսության պահանջների տեսակետից ավելի բարձր է):

**33. Գործազրկության մակարդակն ըստ տարիքի, սեռի և բնակչակայրի տիպի:**



**34. Գործազրկության մակարդակն ըստ բարեկեցության, կրության, մասնագիտության:**



## Աշխատանքային կարգավիճակները և շահսատելու դաշտառները

Զբաղված երիտասարդների աշխատանքային կարգավիճակները տրված են Աղյուսակ 10.-ում:

### 10. Զբաղված երիտասարդների աշխատանքային կարգավիճակներ:

Կարգավիճակ	18-19		20-24		25-30		Ընդ.
	Ար.	Իզ.	Ար.	Իզ.	Ար.	Իզ.	
Վարձու աշխատող՝ երկարատև պայմանագրով	14.6%	15.6%	25.3%	20.6%	42.7%	42.6%	32.6%
Վարձու աշխատող՝ բանավոր համաձայնությամբ	46.4%	15.6%	26.8%	28.6%	19.8%	7.4%	22.4%
Ինքնազբաղված գյուղատնտեսությունում	19.3%	12.4%	18.2%	15.9%	11.0%	24.3%	16.4%
Ինքնազբաղված այլ գործութեությամբ	10.7%	40.3%	12.5%	10.7%	11.7%	9.4%	12.1%
Վարձու աշխատող՝ կարճատև պայմանագրով	7.0%	11.2%	11.5%	16.1%	5.8%	12.6%	9.9%
Գործատու	-	-	1.7%	0.6%	5.1%	-	2.3%
Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ	2.0%	-	2.7%	3.5%	1.2%	2.5%	2.1%
Արտադրական կամ սպառողական կոռուպտաժիվի անդամ	-	-	0.3%	1.9%	1.2%	-	0.7%
Պատահական բնույթի աշխատանք	-	-		1.5%	0.6%	-	0.4%
Սեփական բիզնես	-	-	0.3%	-	0.2%	1.2%	0.3%
Արտագնա աշխատող	-	-	-	-	0.6%	-	0.2%
Կամավոր	-	4.9%	-	0.6%	-	-	0.2%
<b>Ընդամենը</b>	<b>100.0%</b>						

Զբաղված երիտասարդների ամենամեծ հատվածը (32.6%) երկարատև (մեկ տարի և ավելի) պայմանագրերով վարձու աշխատողներ են:

Երկրորդ խոչը խումբը, սակայն, (յուրաքանչյուր 5-րդ աշխատող երիտասարդ), արդեն գտնվում է ստվերային գրաղվածության ոլորտում (22.4%). Առանք բանավոր համաձայնությամբ (առանց պայմանագրի) վարձու աշխատողներ են: Դետեկտարա նրանք կուտակային թշչակային համակարգում չունեն և չեն ուժենա որևէ ներդրում, ինչպես նաև աշխատում են առանց սոցիալական երաշխիքների, որոնք նախատեսված են աշխատանքային օրենսդրությամբ:

Գործատու է երիտասարդների 2.3%-ը:

Երիտասարդների լրացամենը 16.4%-ն է զբաղված գյուղատնտեսության ոլորտում, և դա այն դեպքում, եթե հանրապետական մասշտաբով գյուղատնտեսությունում զբաղվածները 2011 թ-ի սեպտեմբերին կազմել են 32.0%:<sup>22</sup>

Աղյուսակ 10.-ի տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդների աշխատանքային կարգավիճակները նշանակալի չափով պայմանավորված են նրանց սեռատարիքային բնութագրերից: Մասնավորապես՝

22 Տե՛ս՝ «Այ Փի էս Սի»-ի նշված հետազոտությունը:

- Երկարատև պայմանագրերով աշխատող վարձու աշխատողները մեծ թիվ են կազմում 25-30 տարեկան գրադաժների ենթախմբում:
- 18-19 տարեկան տղաների խճռում բանավոր պայմանավորվածությամբ վարձու աշխատողները կազմում են այդ ենթախմբի բոլոր գրադաժների 46.4%-ը:
- 18-19 տարեկան աղջիկների ենթախմբում 40% են կազմում այլ գործունեությամբ ինքնագրադաժները (մեծ հավանականությամբ՝ տոնավաճառների և փոքր խանութների վաճառողությունները):
- 20-24 տարեկանների խճռում, չնայած 18-19 տարեկան տղաների խճքի համեմատ ավելի քիչ են բանավոր պայմանավորվածությամբ վարձու աշխատողները, սակայն իրենց խճռում նրանք մոտավորապես նույնքան են, որքան երկարատև պայմանագրով վարձու աշխատողները (25-28%):

Զաշխատող երիտասարդների չաշխատելու պատճառները տրված են Այլուսակ 11.-ում: Այլուսակի տվյալներից երևում է, որ տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդների առավել «խնդրահարույց» ենթախմբը կազմում է այդ խճքի մոտ մեկ քառորդ՝ նրանք, ովքեր «պարզապես» չեն աշխատում, այսինքն՝ նրանք ոչ միայն «աշխատանք չունեն», այլև աշխատանք չեն փնտրում:

## 11. Չափանիշներ (տնտեսապես ոչ ակտիվության) առավել տարածված դասձառներ:

Պատճառ	18-19		20-24		25-30		Ընդ.
	Ար.	Իզ.	Ար.	Իզ.	Ար.	Իզ.	
Աշխատանք չունեն	11.2%	14.2%	46.4%	28.5%	57.1%	22.4%	26.2%
Տնային տնտեսությի/տնտեսություն վարող	-	11.6%	-	34.9%	-	47.7%	25.5%
Սովորող	54.6%	58.5%	32.7%	14.3%	2.2%	1.5%	23.8%
Երեխային են խնամում	-	5.1%	-	12.8%	5.5%	12.9%	8.5%
Ֆիզարձակուրողներ	-	2.6%	-	1.0%	-	5.0%	2.2%

## Աշխատավարձեր և հասարակայնութեն ընդունելի կենսամակարդակ


Երիտասարդության շրջանում սոցիալական լարվածության աղբյուր է ոչ միայն գործազրկությունը, այլև աշխատողների աշխատավարձի ցածր մակարդակը, աշխատանքից հոգեպես/բարոյապես անբավարարվածությունը, ինչպես նաև հասարակայնութեն ընդունելի կենսամակարդակից ավելի ցածր կենսամակարդակը: Ստորև տրված են երիտասարդության շրջանում նշված պարագաների գնահատականները, որոնց թվում՝ բավարարվածությունը աշխատավարձի չափից (Գծապատկեր 35., Այլուսակ 12.), բարոյական բավարարվածությունը կատարած աշխատանքից (Այլուսակ 13.), 8-ժամյա աշխատանքային օրվա դիմաց ակնկալվող աշխատավարձի չափը (Գծապատկեր 36., Գծապատկեր 37.), երկու չափահասից և երկու անչափահասից կազմված ընտանիքի համար կենսամակարդակային գնահատականները (Գծապատկեր 38. և Գծապատկեր 39.):

Գծապատկերների տվյալների հիմնական արդյունքները հետևյալն են.

- Իրենց աշխատավարձից կամ եկամուտներից «հիմնականում» կամ «լիովին» բավարարված են գրադաժն երիտասարդների 53.9%-ը, իսկ դժգոհները կազմում են 46.1%:
- Իրենց եկամուտներից առավել դժգոհ են գյուղատնտեսության ոլորտում գրադաժները, որոնցից «ընդհանրապես գոհ չեն» 29.9%-ը, «ընդհանրապես» կամ «հիմնականում գոհ չեն» 56.7%-ը:

**35. «Որքանո՞վ եք բավարարված Ձեր զքաղմունից ստացվող աշխատավաճի/եկամունք չափից»:**

Ընդհանրապես կամ իհմնականում անբավարպածների քանակը



**12. Բավարարվածություն աշխատավաճի չափից:**


Աշխատանքային կարգավիճակ	Ընդհանրապես բավարարված չեմ	Դիմնականում բավարարված եմ	Դիմնականում բավարարված եմ	Լիովին բավարարված եմ
Վարձու աշխատող՝ կարճատև պայմանագրով, մինչև մեկ տարի	17.5%	32.0%	<b>41.3%</b>	9.2%
Վարձու աշխատող՝ երկարատև պայմանագրով, մեկ տարի և ավելի	10.3%	29.7%	<b>51.5%</b>	8.5%
Վարձու աշխատող՝ բանավոր համաձայնությամբ	16.6%	28.9%	<b>49.1%</b>	5.5%
Գործատու	8.0%	18.6%	<b>57.0%</b>	16.4%
Ինքնազբաղված գյուղատնտեսությունում	29.9%	26.8%	<b>34.6%</b>	8.6%
Ինքնազբաղված այլ գործունեությամբ	21.8%	30.5%	<b>42.5%</b>	5.2%
Ընդամենը	17.3%	28.8%	<b>46.4%</b>	7.5%

**13. Հոգեթես բավարարվածությունը կատարած աշխատանքից:**

Աշխատանքային կարգավիճակ	Ընդհանրապես բավարարված չեմ	Դիմնականում բավարարված եմ	Դիմնականում բավարարված եմ	Լիովին բավարարված եմ
Վարձու աշխատող՝ կարճատև պայմանագրով, մինչև մեկ տարի	6.8%	19.6%	<b>46.8%</b>	26.8%
Վարձու աշխատող՝ երկարատև պայմանագրով, մեկ տարի և ավելի	8.3%	13.0%	<b>45.9%</b>	32.7%
Վարձու աշխատող՝ բանավոր համաձայնությամբ	19.2%	16.4%	<b>40.5%</b>	23.9%
Գործատու	8.0%	18.6%	<b>47.5%</b>	25.8%
Ինքնազբաղված գյուղատնտեսությունում	20.2%	21.0%	<b>50.6%</b>	8.3%
Ինքնազբաղված այլ գործունեությամբ	21.3%	19.0%	<b>37.0%</b>	22.7%
Ընդամենը	<b>14.9%</b>	<b>16.8%</b>	<b>44.2%</b>	<b>24.1%</b>

- Երիտասարդների 64.2%-ը 8-ժամյա աշխատանքի դիմաց ակնկալում է 100.000 դրամ կամ ավելի բարձր աշխատավարձ, իսկ 16.4%-ը՝ 200.000 դրամ կամ ավելի բարձր: Ընդ որում՝ միջին աշխատավարձը (դրամով), կախված երիտասարդի ժողովողագրական բնութագրերից, տատանվում է բավականին մեծ միջակայքում: Մասնավորապես՝
  - Եթե տղամարդկանց համար այն 183.000 դրամ է, ապա կանանց համար՝ 135.000,
  - Բարձրագույն կրթությամբ անձանց համար՝ 172.000, իսկ մագիստրոսական կրթությամբ անձանց համար՝ 232.000 դրամ<sup>23</sup>,
  - Երևանի բնակիչների համար՝ 179.000, իսկ գյուղաբնակների համար՝ 154.000 դրամ:

 36. 8-ժամյա աշխատանքային օրվա դիմաց ակնկալվող աշխատավարձի չափը:




<sup>23</sup> Այս և հետագա բոլոր վերլուծություններում թերի բարձրագույն կրթությամբ անձինք են համարվում նրանք, ովքեր սովորում են բակալավրիատում կամ ավարտել են բակալավրիատը, սակայն դիպլոմ չեն ստացել, իսկ բարձրագույն կրթությամբ անձինք են համարվում բակալավրիատն ավարտած կամ 5-ամյա ուսուցում անցած ու դիպլոմավորված մասնագետները:

Կենսամակարդակային գնահատականները նույնապես տատանվում են մեծ միջակայքում: Ընդ որում՝ այդ ցուցանիշի վրա առավելապես ազդում են բնակավայրի տիպը և կրթամակարդակը: Մասնավորապես երկու չափահասից և երկու անչափահասից կազմված ընտանիքի համար ակնկալվող ընտանեկան միջին եկամուտները (դրամով) բաշխվել են հետևյալ կերպ:


- Երևանում «լավ ապրելու» համար անհրաժեշտ է միջինը 515.000 դրամ, քաղաքներում՝ 404.000 դրամ, գյուղերում՝ 350.000 դրամ,
- Երևանում «ճորմալ ապրելու» համար՝ 317.000 դրամ, քաղաքներում՝ 252.000 դրամ, գյուղերում՝ 221.000 դրամ,
- Երևանում «աղքատ չհամարվելու» համար անհրաժեշտ է միջինը 191.000 դրամ, քաղաքներում՝ 144.000 դրամ, գյուղերում՝ 123.000 դրամ:

### 37. 8-ժամյա աշխատանքային օրվա դիմաց ակնկալվող աշխատավարձի չափն ըստ ժողովրդագրական բնութագրերի:

Ակնկալվող միջին աշխատավարձը (հազար դրամ)




- ☒ 38. Երկու շափահասներից և երկու անշափահասներից կազմված ընտանիքի «լավ ապրելու», «նորմալ ապրելու» և «աղքատ շաբաթարվելու» համար անհրաժեշտ ամսական միջին եկամուտը:



Տրված են 5% հատված միջինները:

- ☒ 39. Երկու շափահասներից և երկու անշափահասներից կազմված ընտանիքի «լավ ապրելու», «նորմալ ապրելու» և «աղքատ շաբաթարվելու» համար անհրաժեշտ ամսական միջին եկամուտը:



Տրված են 5% հատված միջինները:

## Բիզնես միջավայր

ՀՅ Կառավարության՝ տնտեսությանը վերաբերող կայլսոր ռազմավարությունների շարքում է փոքր բիզնեսի զարգացումը: Այդ առումով հատկապես կարևոր են երիտասարդության դիրքորոշումները Հայաստանում բիզնես վարելու հետ կապված հարցերի վերաբերյալ:

Այս ենթարածնում դիտարկվում են հետևյալ հարցերը.


1. Որքանո՞վ են Հայաստանի երիտասարդները հետեւ տնտեսական վարդի դիրքորոշումներում հակված (ցանկանում) բիզնեսով գրաղվելու՞ համենատած վարձու աշխատանքի հետ:
2. Ինչպիսի՞ն են երիտասարդների դիրքորոշումները բիզնես գործընկերության վերաբերյալ:
3. Վարձու աշխատանքի դեպքում ի՞նչ տիպի ձեռնարկություններում կցանկանային աշխատել երիտասարդները:
4. Ինչպիսի՞ն են Հայաստանի երիտասարդների ընդհանուր դիրքորոշումները Հայաստանում առկա բիզնես միջավայրի վերաբերյալ:

## Հակվածությունը բիզնեսին

Հնարավորություն ունենալու դեպքում Հայաստանի երիտասարդների 68.4%-ն ավելի շուտ կգերադասեր գրաղվել բիզնեսով, քան վարձու աշխատանքով (Գծապատկեր 40.): Ընդ որում՝ ինչպես երևում է Գծապատկեր 41.-ից, այդ դիրքորոշումը շատ բարձր է ինչպես տղամարդկանց (74.9%), այնպես էլ կանանց շրջանում (61.9%): Սակայն, երիտասարդների միայն 29.4%-ն է համարում, որ «Հայաստանում ստեղծված են բարենպաստ պայմաններ բիզնեսով գրաղվելու համար» (Գծապատկեր 44.): Ի դեպք, հատկանշական է, որ բիզնեսով գրաղվելու վերաբերյալ դիրքորոշումը, երիտասարդների տարիքային աճին զուգընթաց, նվազում է: Այդ երևույթը թերևս բացատրվում է նրանց՝ տարիքի հետ առավել իրատես դառնալու հանգամանքով:


### 40. Բիզնեսի նկատմամբ հակվածություններ:

«Եթե ունենայիք ընտրելու հնարավորություն, ապա ավելի շուտ կգերադասեիք իհմնել սեփական բիզնես՝ թե՝ գտնել լավ վարձատրվող աշխատանք»:



### 41. Ըստ տարիքի՝ բիզնեսի նկատմամբ հակվածություններ:

«Եթե ունենայիք ընտրելու հնարավորություն, ապա ավելի շուտ կգերադասեիք իհմնել սեփական բիզնես՝ թե՝ գտնել լավ վարձատրվող աշխատանք»:




■ Հակված են վարձու աշխատանքի

■ Հակված են բիզնեսի

## Բիզնես նախաձեռնելու ռազմավարությունները

Բիզնես նախաձեռնելու վերաբերյալ երիտասարդների դիրքորոշումները գնահատելու համար նրանց տրվել է հետևյալ հարցը. «Եթե մասնավոր բիզնես ծեռնարկեիք, ապա ավելի շուտ կգերադասեիք այն իհմնել՝ 1. մենակ, 2. հարազատների հետ, 3. ընկերների հետ, 4. բիզնեսից լավ հասկացող անձի հետ»: Ընդ որում՝ թույլատրվում էր նշել ոչ ավելի, քան երկու պատասխան: Որպես առաջին գերակայություն՝ երիտասարդների 51.4%-ը նախընտրել է բիզնեսը նախաձեռնել հարազատների հետ, իսկ 34.1%-ը՝ մենակ (Գծապատկեր 42.): Ընդ որում՝ 4-րդ տարբերակը՝ որպես առաջին գերակայություն, նշվել է միայն 0.2%-ի կողմից: Երիտասարդների 76.7%-ն էլ, սակայն, որպես երկրորդ գերակայություն ընտրել է «բիզնեսից լավ հասկացող անձին»: Ստացված արդյունքը վերահսատատում է այն իրողությունը, որ Յայաստանում շատ ցածր մակարդակի վրա է սոցիալական կապիտալը՝ մարդկանց միջև փոխվստահության առկայությունը և միմյանց հետ համագործակցելու պատրաստակամությունը, որոնք, տարբեր հետազոտությունների համաձայն, հանդիսանում են բիզնեսը նախաձեռնելու համար այլ կապիտալների (ֆինանսական, տեխնոլոգիական և այլն) դեֆիցիտի կոնպենսացման արդյունավետ այլընտրանք:<sup>24,25</sup>

### 42. «Եթե մասնավոր բիզնես ձեռնարկեիք, առա ո՞ւմ ինչ կգերազանեիք այն իիմնել:



## Գերակա աշխատավայրերը


Յայաստանի տնտեսության իրավիճակի անուղղակի նկարագրություն է պարունակում այն, թե ինչպիսի կազմակերպություններում կգերադասենին աշխատել Յայաստանի երիտասարդները, եթե ունենային ընտրելու հնարավորություն (Գծապատկեր 43.):

Երիտասարդների առաջին գերակայությունը մոտավորապես հավասար կերպով բաշխվել է հետևյալ տիպի՝ ծեռնարկությունների միջև՝ պետական կառավարման մարմիններ, հայկական խոշոր բիզնես, պետական գործարաններ, միջազգային կազմակերպություններ, պետական այլ մարմիններ, Յայաստանում գործող արտասահմանյան ընկերությունների ներկայացուցություններ: Որպես երկրորդ գերակայություն՝ առավելապես նշվել են միջազգային կազմակերպությունները, հայկական խոշոր բիզնեսը և Յայաստանում գործող արտասահմանյան ընկերությունների ներկայացուցությունները:

24 Պանեմ Բ., Чтобы демократия сработала. Гражданские традиции в современной Италии, М. Ad Marginem, 1996, 207 с.՝

25 Մանուկյան Ս. Ա., Սյունիքի մարզի գործարար կանայք. սոցիոլոգիական համայնապատկեր, Եր., Գորիսի կանանց զարգացման «Ուսուլը կենտրոն» հիմնադրամ, 2011, 142 էջ:

43. «Եթե ունենայիք ընտելու հնարավորություն, աղա Ձեզ բավարարող աշխատավաճով որժիղ կզերադասեիք աշխատել»:



Հատկանշական է, որ հայկական փոքր բիզնեսը (հարցվողի համար հստակեցվել է՝ «որը պատկանում է ոչ թե իրեն, այլ ուրիշ անձի»)՝ որպես առաջին գերակայություն, նշել է ընդամենը 2.9%-ը, իսկ որպես երկրորդ գերակայություն՝ ընդամենը 5.7%-ը:

Այստեղից բխում է, որ...

Հայաստանի երիտասարդների համար որպես աշխատավայր նախև առաջ գերադասելի են կայուն, իսկ հետո՝ բարձր աշխատավարձով աշխատատեղերը:

Հայկական փոքր բիզնեսն այդպիսին չէ և բացի դրանից՝ ունի մի շարք այլ նշանակալի բացասական կողմեր:

## Դիրքուումները Հայաստանի տնտեսության, բիզնեսի և բիզնես միջավայրի վերաբերյալ

Սոցիալական կապիտալի ցածր մակարդակի նասին են վկայում նաև Հայաստանի երիտասարդության մի շարք այլ դիրքորոշումներ (տես՝ Գծապատկեր 44., Գծապատկեր 45.): Մասնավորապես այն դրույթի հետ, որ «Հայաստանում պակասում է վստահությունը մարդկանց միջև», համաձայն է երիտասարդների 85.4%-ը, որ «Հայաստանում մարդիկ չկամ (չուզող) են միմյանց նկատմամբ», համաձայն է 75.6%-ը, որ «Բիզնեսում հայ գործընկերներն անզնիվ են», համաձայն է 61.2%-ը, որ «Եթե աչքդ աշխատողի վրա չպահես, ապա նա ինչ-որ բան «կթոցնի»», համաձայն է 71%-ը: «Հայաստանում մարդիկ ծշմարտախոս են» դրույթի հետ էլ համաձայն է երիտասարդների միայն 31.6%-ը:

 **44. Գիրքուումները Հայաստանի տնտեսության, քիզնեսի և քիզնես միջավայրի վերաբերյալ:**




29.4%	Երիտասարդների համար Հայաստանում առկա են բարենպաստ պայմաններ՝ թիզնեսով գրավվելու համար
31.6%	Հայաստանում մարդիկ ճշմարտախոս են
36.5%	Հայաստանում ամեն մարդ հնարավորություն ունի ստեղծելու իր թիզնեսը
50.4%	Ես կարողանում եմ այնպես պլանավորել իմ ծախսերը, որ գումարն ինձ բավականցնում է մինչև ամսվա վերջ
61.2%	Թիզնեսում հայ գործընկերները անազնիվ են
71.0%	Եթե աչքի աշխատողի վրա չպահես, ապա նա ինչ-որ բան «կթոցնի»
75.6%	Հայաստանում մարդիկ չկամ (չուզող) են միմյանց նկատմամբ
79.2%	Պետք է պետականացնել Հայաստանի խոշոր ձեռնարկությունները
85.4%	Հայաստանում պակասում է վստահությունը մարդկանց միջև
86.6%	Հայաստանի տնտեսությունը զարգացնելու համար անհրաժեշտ է զարգացնել խոշոր թիզնեսը
88.4%	Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրները և օլիգարխներն ավելի ու ավելի մեծ ազդեցություն են ծեռք բերում՝ դրույթի հետ համաձայնել է Հայաստանի երիտասարդների 88.4%-ը:

Հայաստանի երիտասարդության այլ դիրքորոշումները Հայաստանի տնտեսության վերաբերյալ ընդհանրապես և դրա առավել ընդունելի տեսլականն արտահայտված են նրանց՝ հետևյալ դրույթներին տված համաձայնության աստիճանով:


- «Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրներն ու օլիգարխներն ավելի ու ավելի մեծ ազդեցություն են ծեռք բերում» դրույթի հետ համաձայնել է Հայաստանի երիտասարդների 88.4%-ը:
- «Հայաստանի տնտեսությունը զարգացնելու համար անհրաժեշտ է զարգացնել խոշոր թիզնեսը» դրույթի հետ համաձայնել է 86.8%-ը:
- «Պետք է պետականացնել Հայաստանի խոշոր ձեռնարկությունները» դրույթի հետ համաձայնել է 79.2%-ը:

Այդ դրույթների հետ համաձայնության աստիճանի կախվածությունը սեռից, տարիքից և բնակավայրի տիպից տրված է Գծապատկեր 45.-ում, Գծապատկեր 46.-ում և Գծապատկեր 47.-ում:


**45. Պիրենուումները Հայաստանի տնտեսության, քիզնեսի և քիզնես միջավայրի վերաբերյալ՝ ըստ սեռի:**



**46. Պիրենուումները Հայաստանի տնտեսության, քիզնեսի և քիզնես միջավայրի վերաբերյալ՝ ըստ տարիքի:**



☒ 47. Գիրքորուումները Հայաստանի տնտեսության, բիզնեսի և բիզնես միջավայրի վերաբերյալ՝ ըստ բնակչավայրի տիպի:



## 4. Քաղաքական մշակույթ

Քաղաքական մշակույթը հասարակության անդամների գիտակցությունում խաղաքականության ոլորտի, խաղաքական գործընթացների ու սուբյեկտների (այդ թվում՝ նաև իր և հասարակության տարեր շերտերի դերի ու նշանակության) մասին դաշկերացումների ու դիրքուումների, ինչպես նաև տարեր անձանց ու հասարակության շերտերի և խաղաքականության սուբյեկտների խաղաքական մասնակցության ասիճանի, ձևերի ու մեխանիզմների համակարգն է:

Այս բաժնում ներկայացված են Հայաստանի երիտասարդության խաղաքական մշակույթի մի շարք բնութագրի հիմքներ, որոնց թվում

1. Խաղաքական մասնակցության հիմնական բնութագրերը, որոնք բոլոր են տալիս հասարակական այդ շերտը դասակարգել խաղաքական մշակույթի դասական տեսության հարացույցում:
2. Խաղաքացիական մասնակցության մի հանի բնութագրեր:
3. Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող սոցիալ-ստեսական գործընթացների գնահատականները:
4. Գնահատականները դեռական երիտասարդական մի հանի ծրագրերի վերաբերյալ:
5. Դիրքուումները ՀՀ ԶՈՒ-ում առկա այն խնդիրների վերաբերյալ, որոնք ներկայում գտնվում են հասարակության ուսադրության կենսորնում:






## Քաղաքական մշակույթի հիմնական բնութագրերը

Դայաստանի երիտասարդության քաղաքական մշակույթի հիմնական բնութագրերը՝ քաղաքականությամբ հետաքրքրվածությունը, քաղաքական կոմպետենտությունը, քաղաքական սուբյեկտությունը և քաղաքական մասնակցությունը նկարագրող տվյալները ներկայացված են Գծապատկերներ 48.-ում, 49.-ում, 50.-ում և 51.-ում:

Դայաստանի երիտասարդների 53.1%-ը հետաքրքրված է Հայաստանի ներքաղաքական կյանքով: Նրանց 60.1%-ը համարում է, որ բավարար չափով լավ է կողմնորոշվում Հայաստանի ներքին քաղաքական հարցերում, 57.9% երիտասարդներն են համարում են, որ իրենց ձայնը կարևոր է ընտրությունների ժամանակ: Ազգային ժողովի ընտրությունների մասնակցության դիրքորոշումը բավականին բարձր է՝ 78.8%: Այնուամենայնիվ, երիտասարդների՝ Ազգային ժողովի ընտրություններին իրական մասնակցությունը մեծ հավանականությամբ կլինի նշանակալի չափով ավելի ցածր: Որպես կողմնորոշչի կարելի է ընդունել 2007 թ-ի Աժ ընտրությունները, որոնց մասնակցել է այդ ժամանակ ընտրելու իրավունք ունեցող երիտասարդների 60.6%-ը:


Դարցված երիտասարդների 11.6%-ը եղել է որևէ կուսակցության կամ դրա երիտասարդական թևի անդամ:

### 48. «Որքան՞վ եք հետաքրքրված Հայաստանի ներքաղաքական անցույգարձությունը»:



Քաղաքական հետաքրքրվածություն

### 49. «Որքան՞վ եք կողմնորոշվում Հայաստանի ներքաղաքական հարցերում»:



Քաղաքական կոմպետենտություն

Դայաստանի երիտասարդները բավականին ինտենսիվ կերպով ընդգրկված են քաղաքական տեղեկատվության դաշտում. Նրանց 74.9%-ը լրագրերով, հեռուստատեսությամբ կամ ինտերնետով ամեն օր կամ շաբաթ մի քանի անգամ քաղաքական լուրեր է կարդում կամ դիտում (Գծապատկեր 52.): Ընդ որում՝ ինտերնետում գետեղված քաղաքական լուրերին վստահում է երիտասարդների 75.5%-ը, իսկ Հայաստանի Հանրապետության առաջատար հեռուստաալիքներից մեկին՝ Հ1-ին՝ 56.5%-ը (Գծապատկեր 53.):


**50. «Համաձա՞յն ե՞լ արդյոք, որ Ձեր ձայնը կարևոր է ընտրությունների ժամանակ»:**

Քաղաքական սուրբեկտություն




**52. Քաղաքական լրտերի ստացման ինտենսիվությունը (բոլոր աղբյուրներից):**


«Որքա՞ն հաճախ եք քաղաքական լրտեր կարդում լրագրերում, ամսագրերում, ինտերնետով, լսում ռադիոյով, դիտում հեռուստատեսությամբ»:



**51. Քաղաքական մասնակցություն:**



**53. Վստահությունը և նեղեկավորյան աղբյուրների նկատմամբ:**



«Որքանո՞վ եք վստահում...»:

Կիրիլլովոր ուղղի/փփիկուրով ուղց  
Սահմանադրության պահանջման պատճեն


Չնայած Հայաստանի երիտասարդությունը ինտենսիվ կերպով ընդգրկված է քաղաքական գործընթացում, սակայն նրա գերիշխող նաև ներքուստ օտարված է քաղաքական համակարգից: Երիտասարդների 76.1%-ը համարում է, որ Հայաստանում չկա այնպիսի կուսակցություն, որն արտահայտում է իր շահերը (Գծապատկեր 54.): Ընդ որում՝ այդպիսի դիրքորոշումներն ամենից շատ տարածված են Երևանում (83.4%): Գյուղերում այդպիսի դիրքորոշումները ունի երիտասարդների 70.6%-ը (Գծապատկեր 55.):

Դատկանշական է, որ իրենց շահերը պաշտպանող կուսակցության գոյության մասին համեմատաբար ավելի հաճախ են փաստել ուսանողները, ովքեր գտնվում են կուսակցությունների ուշադրության կենտրոնում: Ուսանողների 30%-ը պատասխանել է, որ Հայաստանում կա այնպիսի կուսակցություն, որը պաշտպանում է իր շահերը:


Այնուամենայնիվ, իրենց շահերն արտահայտող կուսակցության գոյության փաստն արձանագրող ուսանողների քաղաքական գիտակցությունը թերզարգացած է: Բանն այն է, որ այն հարցին, թե ո՞րն է իրենց շահերը պաշտպանող կուսակցության գաղափարախոսությունը, կարողացել է պատասխանել այդ ուսանողների ընդամենը 3%-ը:

Իրենց շահերն արտահայտող կուսակցության գոյության փաստն արձանագրող ուսանողների 41%-ը որպես այդ կուսակցության գաղափարախոսություն նշել է քաղաքական քարոզության իդեոլոգիաները (օրինակ՝ «նտածում է ժողովորի մասին», «նրանց խոսքը գործ է», «կանգնած են ուսանողների կողքին» և այլն):


**54. «Կո՞ արդյո՞ք որևէ կուսակցություն, որն արտահայտում է Ձեր շահերը»:**



**55. «Կո՞ արդյո՞ք որևէ կուսակցություն, որն արտահայտում է Ձեր շահերը» (ըստ բնակչակայրի Տիվի):**



**56. «Ք՞նչ գաղտիարախոսություն ունի Ձեր շահերը դաշտանող կուսակցությունը»:  
Կուսակցականների խնակի դռտնության աճը:**



Կուսակցականների վերաբերյալ ուսանողության դիրքորոշումներն ուսումնասիրելու համար տրվել է հետևյալ հարցը. «Ինչո՞ւ են մարդիկ դառնում կուսակցության անդամ»: Որպես պատասխանների տարբերակներ ներկայացվել են այլասիրական (ալտրուիստական) և անձնապաշտական (էգոիստական) հետևյալ դիրքորոշումները.

1. Լավ պաշտոն ծեռք բերելու համար (անձնապաշտական),
2. Լավ աշխատանք գտնելու համար (անձնապաշտական),
3. Սեփական գաղափարներն իրականացնելու համար (այլասիրական),
4. Ազգին/պետությանը օգտակար լինելու համար (այլասիրական),
5. Կյանքում վստահ զգալու համար (անձնապաշտական):

Թույլատրվել էր նշել երկու պատասխան: Երիտասարդների մոտ 75%-ը որպես առաջին պատասխան է ընտրել անձնապաշտական տարբերակները (Աղյուսակ 14.):

**14. «Բնշո՞ւ են մարդիկ դառնում կուսակցության անդամ»:**

Դրդապատճառ և դրդապատճառի տիպ	1-ին պատճառ	2-րդ պատճառ
Լավ պաշտոն ծեռք բերելու համար (անձնապաշտական)	34.5%	25.6%
Լավ աշխատանք գտնելու համար (անձնապաշտական)	32.4%	34.1%
Սեփական գաղափարներն իրականացնելու համար (այլասիրական)	13.5%	16.3%
Ազգին/պետությանը օգտակար լինելու համար (այլասիրական)	12.1%	10.8%
Կյանքում վստահ զգալու համար (անձնապաշտական)	6.2%	11.6%
Այլ	1.2%	1.6%

Ըստ կուսակցականների վերաբերյալ արտահայտած դիրքորոշումների՝ Հայաստանի երիտասարդությանը դասակարգելու համար կառուցվել է եռարժեք ինդեքս.


1. Երիտասարդներ, ովքեր որպես կուսակցության անդամ դառնալու դրդապատճառ ընտրել են երկու այլասիրական տարրերակներ: Այս երիտասարդները դասակարգվել են որպես կուսակցականներին «Այլասիրական» տիպ համարողներ:
2. Երիտասարդներ, ովքեր որպես կուսակցության անդամ դառնալու դրդապատճառ ընտրել են մեկ այլասիրական և մեկ անձնապաշտական տարրերակներ: Այս երիտասարդները դասակարգվել են որպես կուսակցականներին «Խառը» դիրքորոշումներով տիպ համարողներ:
3. Երիտասարդներ, ովքեր որպես կուսակցության անդամ դառնալու դրդապատճառ ընտրել են երկու անձնապաշտական տարրերակներ: Այս երիտասարդները դասակարգվել են որպես կուսակցականներին «Անձնապաշտական» տիպ համարողներ:

Պարզվել է, որ Հայաստանի երիտասարդների 59.9%-ը կուսակցականներին համարում է զուտ «Անձնապաշտական» տիպեր (Գծապատկեր 57.), 29.3%-ը՝ «Խառը» տիպեր, իսկ 10.8%-ը՝ «Այլասիրական» տիպեր:

Երիտասարդության քաղաքական մասնակցության տիպերը դասակարգելու համար 2012 թ-ի Աժ ընտրություններին մասնակցելու պատրաստականություն հայտնածներին հարց է տրվել, թե ինչո՞ւ են նրանք պատրաստվում մասնակցել այդ ընտրություններին (Այլուսակ 15.): Ընտրություններին մասնակցելու դիրքորոշում ունեցողների 60%-ը տվել է այնպիսի պատասխաններ, որոնք համապատասխանում են հաստակային քաղաքական մշակույթ կրող անձանց, իսկ 40%-ը՝ մասնակցային քաղաքական մշակույթ կրողներին:

Ընտրություններին մասնակցել չցանկացողների ամենամեծ հատվածը (33.2%) որպես չմասնակցելու պատճառ տվել է խուսափողական պատասխան («Չեն ցանկանում մասնակցել»): Երկրորդ խոշոր հատվածը պատասխանել է, որ «Իր ծայնը ոչինչ չի որոշում» (25.6%): Երրորդ խոշոր հատվածը որպես չմասնակցելու պատճառ նշել է, որ «Ընտրություններն արդար չեն» (9.6%):

## 57. Կուսակցական դաշնալու դրդապատճառները:



**15. Ըստուրյուններին մասնակցությունն ըստ հաղախական մշակույթի տիպարանության:**

Քաղաքական մշակույթ	«Ինչո՞ւ կմասնակցեիք 2012 թ. Ազգային ժողովի ընտրություններին»	%՝ ամբողջ ընտրանքից	%՝ ընտրություններին մասնակցել ցանկացողներից
Հպատակային	Քաղաքացիական պարունակությունը	21.9	29.0
Հպատակային	Դուրս է գալիս ընտրելու պահը	6.6	8.7
Հպատակային	Դժվարացնել է պատասխանել	6.4	8.5
Հպատակային	Ուղղակի, հենց այնպես	4.9	6.5
Հպատակային	Ենտաքրքրության համար	4.8	6.4
Հպատակային	Ընդորկված է ընտրական հանձնաժողովում	0.5	0.7
Հպատակային	Դայրը կուսակցական է	0.3	0.3
Հպատակային	Փող ստանալու ակնկալիքով	0.1	0.1
<b>Ընդամենը հպատակային</b>		<b>45.5</b>	<b>60.2</b>
Սասնակցային	Չայնը տեղ հասցնելու համար	9.2	12.2
Սասնակցային	Պաշտպանելու համար իր ընտրական կուսակցության/թեկնածուին	8.4	11.1
Սասնակցային	Որպեսզի իր տեղն այլ անձ չըվեարկի	6.1	8.1
Սասնակցային	Նպաստելու համար երկրության փոփոխություններին	3.4	4.6
Սասնակցային	Երկրին օգտակար լինելու համար	2.4	3.1
Սասնակցային	Կրտարության հասնելու համար	0.3	0.4
Սասնակցային	Իշխանությանը մասնակից լինելու համար	0.2	0.2
<b>Ընդամենը մասնակցային</b>		<b>30.0</b>	<b>39.7</b>
<b>Ընդամենը՝ ընտրություններին մասնակցողներ</b>		<b>75.6</b>	<b>100.0</b>
Չեն մասնակցելու ընտրություններին		<b>24.4</b>	
<b>Ընդամենը</b>		<b>100.0</b>	

**16. Ըստուրյուններին չմասնակցելու դաշտավաներ:**

2012 թ. Ազգային ժողովի ընտրություններին մասնակցել ցանկացողների դրդապատճառները	%՝ ամբողջ ընտրանքից	%՝ ընտրություններին մասնակցել ցանկացողներից
Չեմ ցանկանում մասնակցել	6.6	33.2
Չայն ոչինչ չի որոշում	5.1	25.6
Ընտրություններն արդար չեն	1.9	9.6
Բացակայելու եմ հանրապետությունից	1.5	7.4
Դժվարացնել է պատասխանել	1.5	7.3
Տեղեկացված չեմ կուսակցություններից, քաղաքականությունից հեռու եմ	1.2	6.0
Բանակում եմ լինելու	0.7	3.6
Գոհ եմ ներկա կառավարությունից	0.7	3.4
Գրանցում չունեմ	0.5	2.7
Ժամանակ չունեմ	0.2	1.0
Իմ ուզած թեկնածուն չկա	0.0	0.2
<b>Ընդամենը</b>		<b>20.0</b>
		<b>100.0</b>


## Քաղաքացիական մասնակցություն

Հետազոտությունը ցույց է տվել, որ Հայաստանում հասարակական կազմակերպությունների վերաբերյալ տեղեկացվածությունը բավականին բարձր է: Երիտասարդների 54%-ը գիտի, թե ինչ է հասարակական կազմակերպությունը (Գծապատկեր 58.): Չնայած հասարակական կազմակերպությունների անդամների քանակը չի աճել (իրենց որևէ 34 անդամ են համարել երիտասարդների 3.8%-ը), սակայն եականորեն աճել է որևէ հասարակական կազմակերպության գործունեության շրջանակում կամավորական աշխատանքներ իրականացրած երիտասարդների քանակը (11%):


Հասարակական կազմակերպությունների անդամների վերաբերյալ երիտասարդների դիրքորոշումներն ավելի դրական են, քան կուսակցությունների առողմով: Եթե երիտասարդների 60%-ն է համարում, որ կուսակցականների 60%-ը հետապնդում է զուտ անձնական շահեր, ապա հասարակական կազմակերպությունների անդամների մասին այդպիսի դիրքորոշումներ ունի երիտասարդների 22.8%-ը (Այլուսակ 17.): Հատկանշական է, որ հասարակական կազմակերպությունների վերաբերյալ դրական դիրքորոշումը նշանակալիորեն աճում է նրանց մասին տեղյակ անձանց շրջանում: Այդպիսի անձանց 53.4%-ը համարում է, որ հասարակական կազմակերպությունների անդամները հետապնդում են զուտ հասարակական նպատակներ:

Երիտասարդներ՝ հասարակական կազմակերպությունների հասարակական սուբյեկտության վերաբերյալ արտահայտած դիրքորոշումը բավականին բարձր է: Երիտասարդների 37.2%-ը համարում է, որ հասարակական կազմակերպություններն ունակ են լուծելու հասարակական որևէ խնդիր (Գծապատկեր 59.): Ընդ որում՝ երիտասարդների 18.6%-ը տեղյակ է որևէ կոմկրետ հասարակական նշանակության խնդիր մասին, որը լուծվել է հասարակական կազմակերպության միջոցով (Այլուսակ 18.):

### ☒ 58. Տեղեկացվածությունը հասարակական կազմակերպությունների մասին և մասնակցությունը հասարակական կազմակերպությունների գործունեությանը:




### ☒ 59. «Կարո՞ղ ե արդյօք հայատանում ՀԿ-ն որևէ կարևոր հասարակական խնդիր լուծել»:



17. «Բնչո՞ւ են մարդիկ ստեղծում հասարակական կազմակերպություններ»:

«Ինչո՞ւ են մարդիկ ստեղծում հասարակական կազմակերպություններ»	%՝ ամբողջ ընտրանից	%՝ ՀԿ-ների մասին տեղյակ անձանցից
1. Ցանկանում են հասարակությամն օգտակար լինել	27.6%	53.4%
2. Իրենց անձնական նպատակներն են հետապնդում	22.8%	44.2%
3. Երկուսն էլ	0.8%	1.5%
4. Դրամաշնորհներ շահել	0.1%	0.2%
5. ՀԿ-ները ինֆորմացիա և ֆինանսավորում են ստանում դրսից	0.1%	0.2%
6. Անգրք են մնացել	0.1%	0.1%
7. Ուզում են թիմ ունենալ	0.1%	0.1%
8. «Փող են լվանում»	0.1%	0.2%
<b>Ընդամենը</b>	<b>51.6%</b>	<b>100%</b>

60. «Վիե՞ր արդյո՞ք որևէ հասարակական խնդիր, որը լուծել է ՀԿ-ի միջոցով»:



 18. «Նշե՛ք այն ամենակարևոր խնդիրը, որը լուծվել է որևէ ԴԿ-ի կողմից»:

«Նշե՛ք այն ամենակարևոր խնդիրը, որը լուծվել է որևէ ԴԿ-ի կողմից»	%՝ ամբողջ ընտրանքից	%՝ նշանակած ընտրանքից
1. Թոշկամի ջրվեժի պահպանումը	4.9%	34.6%
2. Փողոցմերի մաքրում	2.9%	20.3%
3. Կանաչապատում/ծառատում/աջակցություն բնապահպանությանը	0.7%	4.8%
4. Բնակարանաշինություն	0.5%	3.2%
5. Գյուղերի ջրի/գազի հարցի լուծում	0.4%	2.7%
6. Դրամական օգնություն	0.3%	2.4%
7. Օգնություն ծնողազուրկ/անապահով երեխաներին	0.3%	2.3%
8. Մանկատների սոցիալական հարցերի կարգավորում	0.3%	2.2%
9. Հաշմանդամներին աջակցություն/աշխատանքի տեղափորում, օգնություն	0.3%	2.2%
10. Ֆինանսական հաշտարար	0.3%	1.9%
11. Շիրակի մարզում նկեղեցիների բարեկարգում	0.3%	1.8%
12. Հուշարձանների վերակառուցում/նորոգում	0.3%	1.8%
13. Վարորդների խնդիրների լուծում	0.3%	1.8%
14. Պայքար բռնւթյան դեմ	0.2%	1.3%
15. «Օգիլի» հիմնադրամի գործունեությունը	0.2%	1.2%
16. Պայքար մանկապիջության դեմ	0.2%	1.2%
17. Գյուղերում դպրոցների կահավորում/բարեկարգում/նորոգում	0.2%	1.1%
18. Թրաֆիքին դեմ պայքար	0.2%	1.1%
19. Հիվանդներին տեղեկատվությամբ ապահովում	0.2%	1.1%
20. Արահանձնական սպառական առաջատարության կրճատում	0.1%	0.9%
21. Սահմանային շրջաններում աղքատության կրճատում	0.1%	0.8%
22. Թեղուսի անտարի խնդիր	0.1%	0.7%
23. Կրորական ոլորտում երիտասարդներին աջակցություն	0.1%	0.6%
24. Ներառական կրորություն	0.1%	0.5%
25. Աշակերտներին իրազեկում են իրենց իրավունքների մասին	0.1%	0.5%
26. Մեռական դաստիարակության խնդիրը	0.0%	0.3%
27. Անապահով երեխաներին դասընթացների մեջ ընդգրկելը	0.0%	0.3%
28. «Ձիմիշյան» հիմնադրամի գործունեությունը	0.0%	0.3%
29. Հակակոռուպցիոն ծագիր	0.0%	0.2%
30. Թնրամուների բուժում	0.0%	0.2%
31. Օգնություն փախստականներին	0.0%	0.2%
<b>Ընդամենը</b>	<b>14.3%</b>	<b>100.0%</b>


## Ներհանրադեսական սոցիալ-սուսեսական զարգացումների գնահատականներ

Նետազոտությամբ ուսումնասիրվել են Հայաստանի երիտասարդության դիրքորոշումները Հայաստանում ընթացող սոցիալ-տնտեսական զարգացումների վերաբերյալ:

Հայաստանյան ընդհանուր զարգացումների առումով դիրքորոշումների բնույթն ուսումնասիրվել է «Ձեր կարծիքով՝ Հայաստանն ընթանում է՝ սխալ ուղղությամբ, ավելի շուտ՝ սխալ ուղղությամբ, ավելի շուտ՝ ճիշտ ուղղությամբ, թե՝ ճիշտ ուղղությամբ» հարցի միջոցով: Երիտասարդների՝ Հայաստանի զարգացման ուղղության վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները կիսված են. նրանց 48.8%-ը համարում է, որ Հայաստանն «ընթանում է ճիշտ ուղղությամբ» (Գծապատկեր 61.): Պատասխանների բաշխումն ունի ձևի շեղում. ավելի շատ երիտասարդներ հակված են համարելու, որ Հայաստանը միանշանակորեն «ընթանում է ճիշտ ուղղությամբ»՝ 20.6%, քան այն ուսանողները, ովքեր հակված են համարելու, որ Հայաստանը միանշանակորեն «ընթանում է սխալ ուղղությամբ»՝ 14.0%:

### 61. «Արյով Հայաստանն ընթանում է ճի՞չ, թե՞ սխալ ուղղությամբ»:

0%      20%      40%



Ուսումնասիրվել են երիտասարդների գնահատականները Հայաստանում՝ առանձին ոլորտներում, տեղի ունեցող փոփոխությունների միտումների վերաբերյալ: Տրվել է հետևյալ հարցը. «Ձեր կարծիքով՝ Հայաստանի հետևյալ ոլորտներում ինչպես է փոխվելում իրավիճակը»: Պատասխանների տարրերակներն են. 1. Վատանում է, 2. ավելի շուտ վատանում է, 3. չի բարելավվում, 4. ավելի շուտ բարելավվում է, 5. բարելավվում է:

Դիտարկվել են հետևյալ ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների ընկալումները.


- Միջնակարգ կրթության ոլորտ,
- Բուհական կրթության ոլորտ,
- Առողջապահության ոլորտ,
- Տուրիզմի ոլորտ,
- Գյուղատնտեսության ոլորտ,
- Արդյունաբերության ոլորտ,
- Հարուստների և աղքատների միջև անհավասարության կրծատման ոլորտ,
- Փոքր բիզնեսի ոլորտ,
- Բարձր տեխնոլոգիաների ոլորտ,
- Աշխատատեղերի ստեղծման ոլորտ,
- Աղքատության կրծատման ոլորտ:

Պատասխանների բաշխումը ներկայացված է Գծապատկեր 62.-ում:

- Երիտասարդների շատ մեծ հատվածը համարում է, որ իրավիճակը բարելավվում է տուրիզմի (78.1%) և բարձր տեխնոլոգիաների (67.2%) ոլորտներում:

- Առավել բացասական են դիրքորոշումները սոցիալական անհավասարության, աղքատության և զբաղվածության ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ: Երիտասարդները համարում են, որ այդ ոլորտներում իրավիճակը բարելավվում է համապատասխանաբար 13.1%-ով, 18.1%-ով և 26.9%-ով: Նրանց մոտ կեսը գտնում է, որ այդ ոլորտներում իրավիճակը վատթարանում է, իսկ 1/3-ը համարում է, որ մնում է անփոփոխ (ինչն ավելի մեծ հավանականությամբ նշանակում է իրավիճակի բացասական գնահատական):

 62. «Հայաստանի հետևյալ ոլորտներում ինչոր է փոխվում իրավիճակը»:



Սոցիալ-տնտեսական ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ դիրքորոշումները ձևավորվում են չորս գործոնների ազդեցությամբ (Գծապատկեր 63):



 63. Իրավիճակի փոփոխության գնահատականները դայմանավորող գործոնները:

«Գ1. Սոցիալական քաղաքականություն» x

«Գ2. Կրթական քաղաքականություն»

«Գ3. Նոր տնտեսական ոլորտների գործոն» x

«Գ4. Ավանդական տնտեսական ոլորտների գործոն»



Գ1. «Սոցիալական քաղաքականության գործոն»: Այս գործոնի ազդեցությամբ միաժամանակ աճում են սոցիալական այն ոլորտներում տեղի ունեցող գործընթացների գնահատականները, որոնց թվում են արքատության կրծատման, անհավասարության կրծատման, աշխատատեղորի ստեղծման և փոքր բիզնեսի ոլորտները: Գծապատկեր 62.-ից երևում է, որ դրանք այն ոլորտներն են, որտեղ երիտասարդների գնահատականներն ամենացածրն են եղել:

Գ2. «Կրթական քաղաքականության գործոն»: Այս գործոնի ազդեցությամբ բարելավվում են դպրոցներում և բուհերում կրթության որակի գնահատականները: Գծապատկեր 62.-ից երևում է, որ դիտարկված ոլորտների շարքում այս գործոնի ընդհանուր դրական տեղաշարժը միջին չափի է:

Գ3. «Նոր տնտեսական ոլորտների գործոն»: Այս գործոնի ազդեցությամբ բարելավվում են տուրիզմի և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների գնահատականները: Դրանք այն ոլորտներն են, որոնցում կատարվող փոփոխությունների գնահատականներն ամենադրականներն են:

Գ4. «Ավանդական տնտեսական ոլորտների գործոն»: Այս գործոնի ազդեցությամբ բարելավվում են արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների գնահատականները: Այս ոլորտներում տեղի ունեցած փոփոխությունների գնահատականները զիջում են միայն տուրիզմի և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում կատարված դրական փոփոխություններին:

## Պետական Երիտասարդական ծրագրեր

Ուսումնասիրվել են երիտասարդների դիրքորոշումները Հայաստանում իրականացվող երեք պետական երիտասարդական ծրագրերի վերաբերյալ: Դրանք են.


1. «Լույս» հիմնադրամի միջոցով աջակցություն երիտասարդների կրթությանը:
2. Երիտասարդ մասնագետների համար սոցիալական բնակարանաշինություն:
3. Երիտասարդ ընտանիքների վարկավորում՝ բնակարան ձեռք բերելու համար:

Այդ ծրագրերից տեղեկացվածության մակարդակը տրված է Գծապատկեր 64.-ում:


Երիտասարդությունն առավել լավատեղյակ է երիտասարդ ընտանիքների հիփոթեքային վարկավորման գործընթացից (ծրագրի մասին լսել է 56.7%-ը, բովանդակությանը ծանոթ է 18%-ը): Երիտասարդների փոքր հատվածն է տեղյակ երիտասարդ մասնագետների համար բնակարանաշինության ծրագրից (լսել է 27.2%-ը, բովանդակությանը ծանոթ է 6.2%-ը) և «Լույս» հիմնադրամի կրթական ծրագրից (լսել է 22.1%-ը, բովանդակությանը տեղյակ է 4%-ը):

Յարկ է նշել, որ պետական երիտասարդական ծրագրերին տեղյակ լինելու դեպքում՝ երիտասարդների՝ դրանց վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները բացարձակ գերակշիռ մասով դրական են. երիտասարդների 91-95%-ն այդ ծրագրերը դրական է գնահատել (Գծապատկեր 65.):

**64. «Որքան՞վ եք տեղեկացված հետևյալ դեմքների վերաբերյալ...»:**




**65. Վերաբերմունք դեմքների երիտասարդական ծրագրերի նկատմամբ:**



## Բանակի հետ կարված խնդիրներ

Հայկական բանակը, ինչպես և Հայ Առաքելական Եկեղեցին, երիտասարդության շրջանում ամենաբարձր վստահության աստիճանն ունեցող ինստիտուտն է: Բանակին վստահում է Հայաստանի երիտասարդների 87.1%-ը (Գծապատկեր 66.):

**66. «Որքան՞վ եք վստահում Հայկական բանակին»:**



Չնայած Հայկական բանակի նկատմամբ երիտասարդների շատ բարձր վստահությանը՝ այնուամենայնիվ, նրանց մեծ մասի կարծիքով, բանակում առկա են որոշակի խնդիրներ:

Հետազոտությամբ ուսումնասիրվել են բանակում առկա այն խնդիրները, որոնք վերջին ժամանակաշրջանում գտնվում են Հայաստանի հասարակության ուշադրության կենտրոնում:

Խնդիրների լրջությունը գնահատվել է հետևյալ սանդղակով. 1. այդպիսի խնդիր բանակում չկա, 2. լուրջ խնդիր չէ, 3. լուրջ խնդիր է, 4. շատ լուրջ խնդիր է:

Երիտասարդները հատկապես լուրջ խնդիրներ են համարում.

- Անպաշտպան ընտանիքներից և ֆիզիկապես թույլ գինվորներին ճնշելը/ստորացնելը/բռնության ենթարկելը (խնդիրը լուրջ կամ շատ լուրջ է համարում երիտասարդների 81.9%-ը),
- Զորամասերի հրամանատարների կողմից զորամասում կատարվող անկարգությունների թաքցնելը (79.9%-ը):

Իսկ ոչ շատ լուրջ են գնահատվել.

- Տարբեր շրջաններից զորակոչված գինվորների միջև հակասությունները (55.1%),
- Բուհ ավարտած զորակոչիկների և սերժանտական անձնակազմի միջև հակասությունները (49.5%):

Հարկ է նշել, որ զորացրվածների շրջանում այդ խնդիրների լրջության ընկալումները վերջին 10 տարիների ընթացքում էապես չեն տարբերվում մինչյանցից: Դրա մասին է վկայում վեր հանված խնդիրների արժեքների բաշխումը վերջին 10 տարիների ընթացքում զորացրված կամ դեռևս ժամկետային ծառայության մեջ գտնվող երիտասարդների<sup>26</sup> գնահատականներում:

Հետազոտության ընթացքում դիտարկվել են նաև, թե երիտասարդների կողմից որքանով են ընդունելի բանակային խնդիրների լուծման մի քանի մեթոդներ: Այդ նպատակով հարց է տրվել. «Ձեր կարծիքով՝ հետևյալ մեթոդները կնպաստե՞ն բանակում առկա խնդիրների լուծմանը»:

Դիտարկվել են հետևյալ մեթոդները.

- Զորամասերի հրամանատարներ նշանակել արդար, բարեխիղճ և պատասխանատու երիտասարդ սպաներին,
- Անարդար, անբարեխիղճ սպաներին հեռացնել բանակից,
- Գտնել և պատժել բանակում հանցագործություն կատարողներին և դրանք թաքցնողներին:

Պատասխանների տարրերակներն էին՝ 1. Սիանշանակ ոչ, 2. Ավելի շուտ ոչ, 3. Ավելի շուտ այո, 4. Սիանշանակ այո:

Երիտասարդների պատասխանների բաշխումները տրված են Գծապատկեր 67.-ում: Բոլոր նշված մեթոդներն ունեցել են համաձայնության շատ բարձր մակարդակ՝ 83-94%: Սակայն, հատկապես բարձր է պատիժների կիրառման հետ համաձայնության աստիճանը:

## 67. Երիտասարդների բանակային խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ արտահայտած դիրքորոշումներ:



1. Զորամասերի հրամանատարներ նշանակել արդար, բարեխիղճ և պատասխանատու երիտասարդ սպաներին

2. Անարդար, անբարեխիղճ սպաներին հեռացնել բանակից

3. Գտնել և պատժել բանակում հանցագործություն կատարողներին և դրանք թաքցնողներին

Այսպիսով՝ Հայկական բանակի նկատմամբ Հայաստանի երիտասարդության գիտակցությունում առկա են հակասական դիրքորոշումներ: Մի կողմից՝ Հայկական բանակի նկատմամբ նրանք ունեն վստահության շատ բարձր մակարդակ, իսկ մյուս կողմից՝ լայնորեն տարածված են այն դիրքորոշումները, ըստ որոնց՝ բանակում առկա են որոշակի խնդիրներ:


26 Հետազոտության ընթացքում հանդիպել են արձակուրդ ստացած մի քանի ժամկետային գինծառայողներ:

Այդ հակասականությունն արտահայտվում է նաև բանակի հետ կապված այլ դիրքորոշումներում: Մասնավորապես երիտասարդների 82.3%-ը համաձայն է այն դրույթի հետ, որ «բանակում ծառայելը պետք է պարտադիր լինի առողջ հայ երիտասարդի համար» (Գծապատկեր 68.): «Եթե բանակում ծառայելը պարտադիր չլիներ, կծառայեի՞ք արդյոք Յայկական բանակում» հարցին էլ, սակայն, դրական է պատասխանել երիտասարդ տղամարդկանց միայն 43%-ը (Գծապատկեր 69. և Գծապատկեր 70.): Ըստ որում՝ գինվորական ծառայության պարտադիր չլինելու դեպքում բանակում կծառայեր ուսանող տղամարդկանց միայն 35%-ը, երևանաբնակ տղամարդկանց՝ 37%-ը, իսկ գյուղաբնակ և այլ քաղաքաբնակ տղամարդկանց՝ 47%-ը:


 68. «Համաձա՞յն եմ, թե՝ համաձայն չեմ հետևյալ դրույթների հետ...»:



 69. «Եթե բանակում ծառայելը դարձադիր չլիներ, ապա Դուք կծառայեի՞ք Հայկական բանակում» (ըստ տարիքի):



 70. «Եթե բանակում ծառայելը դարձադիր չլիներ, ապա Դուք կծառայեի՞ք Հայկական բանակում» (ըստ ուսանողների և ըստ բնակչավայրի տիպի):




Հասարակական գիտակցությունում կարևոր հարցերի վերաբերյալ հակասական դիրքորոշումների առկայությունը (այլ կերպ ասած՝ կոգնիտիվ դիստոնասը) ժամանակի ընթացքում առաջացնում է դրա հանգուցալուծնան հասարակական պահանջ: Եթե հակասական դիրքորոշումներ առաջացնող արտաքին պատճառները հարատևում են, ապա մարդու և հասարակական գիտակցությունում առաջանում են դրանց հանգուցալուծնան ձևեր, որոնք հաճախ կարող են թվական գործադրությունների հետ համապատասխան կազմակերպությունների հետ: Օրինակ՝ տվյալ դեպքում կարող են ուժեղանալ արտագործի միտումները, կարող է առաջանալ կոռուպցիոն դիրքորոշումների աճ, կարող է ուժեղանալ հասարակության մեջ արդեն իսկ տարածված բազմակի ստանդարտների գիտակցված կիրառումը և այլ բացասական սոցիալ-հոգեբանական երևույթներ, որոնք, ի վերջո, կարող են արմատապես փոխել սոցիալական ինստիտուտի (տվյալ դեպքում՝ բանակի) ֆունկցիոնալությունը կամ հասարակական գիտակցությունում առաջացնել վստահության մակարդակի «անսպասելի» կտրուկ նվազում:

## 5. Արտազադի դիրքորոշումներ

Արտազադը շարժնակում է մնալ Հայաստանի կարևորագույն հիմնախնդիրների շարքում: Այս քառուս դիմարկվում են հետևյալ հարցերը:

1. Հայաստանի երիտասարդության՝ այլ երկրներում լինելու փորձը,
2. Ժամանակավորաբեր Հայաստանից դուրս մեկնելու վերաբերյալ դիրքորոշումները,
3. Աշխական քաղաքության մեկնելու վերաբերյալ դիրքորոշումները:




## Արտասահմանում լինելու փորձը

Դայաստանի երիտասարդների մոտ 50%-ը երբէւ եղել է արտասահմանում (Գծապատկեր 71.): Ընդ որում՝ արտասահմանում եղել է 18-19 տարեկան երիտասարդներից յուրաքանչյուր երրորդը: Արտասահմանում լինելու համեմատաբար ավելի մեծ փորձ ունեն տղամարդիկ. արտասահմանում է եղել նրանց 55.8%-ը (Գծապատկեր 72.), երևանի բնակչություն՝ 58.8%-ը (Գծապատկեր 73.), ուսանողներից՝ 55.2%-ը:


Դայաստանի երիտասարդներն առավելապես լինում են Ռուսաստանի Դաշնությունում և Վրաստանում: Կարելի է նեթաղրել, որ վերջին տարիներին ավելացել է ՌԴ և Վրաստան մեկնողների քանակը (ՌԴ այցելել են երբէւ արտասահման մեկնած երիտասարդների 33.2%-ը և վերջին երեք տարիների ընթացքում արտասահման մեկնածների 46.2%-ը): Վրաստան են այցելել երբէւ արտասահման մեկնած երիտասարդների 21.3%-ը և վերջին երեք տարիների ընթացքում արտասահման մեկնածների մոտ 30%-ը): Վերջին երեք տարիների ընթացքում Եվրոպական Միության երկրներում եղել է երիտասարդների 8.8%-ը, իսկ Թուրքիայում՝ 2.4%-ը (Գծապատկեր 74.):

Արտասահման մեկնելու ամենատարածված նպատակը եղել է հանգստանալը: Այդ նպատակով արտասահման է այցելել արտերկիր մեկնածների 45.3%-ը: Արտասահմանյան այցելությունների երկրորդ ամենատարածված նպատակը (34.5%) եղել է աշխատելը (գործարարություն, առևտուր): Երիտասարդների՝ արտասահմանում լինելու երրորդ ամենատարածված նպատակը հետևյալն է՝ «այցելություններ հարզակատներին» (9.3%) (Գծապատկեր 75.):


### 71. Երբէւ արտասահմանում եղած երիտասարդների բաշխումը ըստ տարիքի:




### 72. Երբէւ արտասահմանում եղած երիտասարդների բաշխումը ըստ սեռի:




### 73. Երբէւ արտասահմանում եղած երիտասարդների բաշխումը ըստ քաղաքացիության:



#### 74. Միջազգայի տարածաշրջանները:



#### 75. Միջազգայի նպատակները:



### Ժամանակավոր արտագաղթի դիրքունություններ


Հետազոտության ընթացքում դիտարկվել են տարբեր նպատակներով արտասահման ժամանակավորապես մեկնելու վերաբերյալ դիրքորոշումները, որոնց թվում՝ ժամանակավորապես ապրելու, աշխատելու, սովորելու, բարեկամներին և հարազատներին այցելելու, ինչպես նաև տուրիզմի նպատակներով։

Երիտասարդների՝ ժամանակավորապես արտասահման մեկնելու վերաբերյալ դիրքորոշումները շատ բարձր են (Գծապատճեր 76.) և կախված նպատակից (աշխատելու և բարեկամներին այցելելու նպատակներից)՝ փոփոխվում են 72%-ից մինչև 83.5% (ժամանակավորապես ապրելու նպատակ): Այնուամենայնիվ, արտասահման մեկնելու համար երիտասարդների ֆինանսական միջոցները շատ սուր են: Արտասահման մեկնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ համեմատաբար ավելի շատ ունեն աշխատելու և բարեկամներին այցելելու նպատակներ ունեցող երիտասարդները: Մասնավորապես հարազատներին այցելելու նպատակով ժամանակավորապես արտասահման մեկնել ցանկացող երիտասարդների 28.3%-ն ունի դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, աշխատելու նպատակով մեկնելու ցանկություն ունեցող երիտասարդների՝ 28%-ը, իսկ սովորելու նպատակով մեկնել ցանկացողների՝ 17.7%-ը:

**76. Տարբեր նպատակներով արտասահման մեկնելու վերաբերյալ դիրքությունները և դրա համար բավարար ֆինանսական միջոցների առկայությունը:**

«Դնարավորության դեպքում կմեկնեի՞ք արտասահման հետևյալ նպատակներով»:


«Ունե՞ք արդյոք հետևյալ նպատակով ժամանակավորապես արտասահման մեկնելու համար բավարար ֆինանսական միջոցներ»:




## ՄԵՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երիտասարդության շրջանում ընդմիշտ արտասահման մեկնելու վերաբերյալ դիրքորոշում ունի 36.8%-ը (Գծապատկեր 77.): Ընդ որում՝ երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական տարրեր խնդրելում դրանց բաշխումները քիչ են տարբերվում միմյանցից (Գծապատկեր 77., Գծապատկեր 78., Գծապատկեր 80., Գծապատկեր 81.): Դիտարկված բնութագրերի շարքում բացառություն է կազմում միայն ամուսնացած լինելու հանգամանքը, որն էականորեն նվազեցնում է երիտասարդների ընդմիշտ մեկնելու հակումը. եթե չամուսնացած երիտասարդների 40.7%-ն է ցանկանում ընդմիշտ մեկնել արտասահման, ապա՝ ամուսնացածների միայն 30.8%-ը (Գծապատկեր 79.):


77. Շատրավորության դեմքում  
Հայաստանից ընդմիծ մեկնել  
գանկացողների բաշխումն ըստ տարիքի:




78. Շատրավորության դեմքում  
Հայաստանից ընդմիծ մեկնել  
գանկացողների բաշխումն ըստ սեռի:




79. Շատրավորության դեմքում  
Հայաստանից ընդմիծ մեկնել  
գանկացողների բաշխումն ըստ  
աճուտնական կարգավիճակի:



80. Շատրավորության դեմքում  
Հայաստանից ընդմիծ մեկնել  
գանկացողների բաշխումն ըստ  
ընականային ժիղովի և ըստ ուսանողների:



81. Շատրավորության դեմքում  
Հայաստանից ընդմիծ մեկնել  
գանկացողների բաշխումն ըստ  
կրթական մակարդակի:



---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

## 6. Կրթություն

Առավել հետաքրքրական են երիտասարդների վերաբերմունքն ու դիրքորոշումները կրթության, հասկացման բարձրագույն կրթության նկատմամբ: Մեր ընտանիքում առանձնացրել էին նաև ուսանողությանը՝ որպես ուսումնասիրնան հասուն ենթախումք: Կրթությունը՝ իրեն երիտասարդների զործունեության գերակա աւրատեսակ, անմիջականութեն փոխադարձակցված է կենսազործունեության այլ ոլորտների (զբաղվածություն, միջազգիա, հաղորդակցություն և այլն) հետ՝ փոխադարձակցված նաև այդ ոլորտների հանդեպ վերաբերմունքը:




## Միջնակարգ կրթություն

Նախ ամրադառնանք միջնակարգ կրթությանը և դիտարկենք, թե դպրոցական շրջանում երիտասարդներին առավելապես ո՞ր առարկաներն են հետաքրքրել: Յատկանշական է, որ ավելի մեծ հետաքրքրություն են առաջացնում հայագիտական ուղղվածության առարկաները (Դայ գրականություն՝ 54%, Հայոց պատմություն՝ 44.8%), քանի հասարակագիտական այլ առարկաները (Գծապատկեր 82.):


Յատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ հայ երիտասարդների 22.2%-ը նշում է, որ դպրոցական տարիներին գեղարվեստական գրականություն ընդհանրապես չի կարդացել: Եվ ընդամենը 32.8%-ն է, որ հաճախ է կարդացել գեղարվեստական գրականություն (Գծապատկեր 83.):

Երիտասարդների՝ դպրոցական կրթությունից բավարարվածության վերաբերյալ արտահայտած դիրքորոշումներն ամբողջապես ամփոփված են Այլուսակ 19.-ում: Ինչպես նկատելի է, միայն 15.8%-ն է կարծում, որ դպրոցը լիովին կատարում է իր հիմնական գործառույթները, իսկ 41.2%-ի կարծիքով՝ դպրոցում ստացած գիտելիքները չեն բավարարում թե՛ բուհ ընդունվելու, թե՛ կյանքում կողմնորոշվելու համար:

### 82. «Որքան՞վ էին դպրոցում Ձեզ հետաքրքրում հետևյալ առարկաները»:



### 83. «Դպրոցում սովորելիս, քաջի հանձնարարվածից, հաճա՞խ էի՞ կարդում գեղարվեստական գրականություն»:



**19. Հանրակրթական դպրոցի Փոնկցիոնալությունը:**

«Դպրոցում ստացած գիտելիքները բավարար են, որպեսզի մարդը կողմնորոշվի կյանքում»:

Ոչ	41.2%
Այո	33.6%
Ընդամենը	74.8%

«Դպրոցում ստացած գիտելիքները բավարար են բոլի ընդունվելու համար՝ առանց կրկնուսույցի մոտ պարագելու կամ առանց ժանոթի»:


	Ոչ	Այո	Ընդամենը
Ոչ	41.2%	9.4%	50.6%
Այո	33.6%	15.8%	49.4%
Ընդամենը	74.8%	25.2%	100.0%

Տվյալները վկայում են, որ երիտասարդների համար հանրակրթական դպրոցը լիարժեք չի կատարում իր գործառույթները, ինչը որոշակի անբավարարվածության տեղիք է տալիս:


## Բարձրագույն կրթություն

Ինչ վերաբերում է բարձրագույն կրթությանը, ապա երիտասարդների 64.2%-ը գտնում է, որ առանց բարձրագույն կրթության կամ համապատասխան դիպլոմի հնարավոր չէ «կյանքում իր տեղը գտնել», և միայն 35.8%-ն է կարծում, որ դա պարտադիր չէ (Գծապատկեր 84.): Առավել հետաքրքրական է, որ երիտասարդների 81.1%-ը բավարարված է բուհում ստացած իր գիտելիքներով (Գծապատկեր 85.), սակայն 86.7%-ը կցանկանար սովորել արտասահմանում. ընդ որում՝ 0.5%-ը սովորում կամ սովորել է արտասահմանում (Գծապատկեր 86.): Սա վկայում է այն մասին, որ ստացած գիտելիքներից թեկուզ և առկա է որոշակի բավարարվածություն, սակայն երիտասարդների մեծամասնությունը ծգտում է սովորել արտերկրում, ինչն էլ ժամանակավոր կամ հիմնական միգրացիայի նախապայմաններից մեկն է հանդիսանում:


**84. «Կյանքում իր տեղը գտնելու համար բարձրագույն կրթության կամ թեկուզ դրա դիմում ունենալը դարսադիր է, թե՞ դարսադիր չէ»:**



**85. «Բավարարված եթ արդյոք Ձեր բուհում ստացած գիտելիքներից»:**



86. «Նարավորության դեմքում կգերազանի՞ք  
արյով սովորել արտասահմանյան բուհում»:



Այսպիսով՝

- Դայաստանի կրթական համակարգի գործունեությունը չի համապատասխանում Դայաստանի տնտեսության զարգացման պահանջներին և միաժամանակ շարունակում է վերարտադրել սոցիալական լարվածությունը։ Այն դրսևորվում է հանրակրթության մակարդակում իր գործառույթների ոչ լիարժեք իրազործմամբ և բարձրագույն կրթության մակարդակում միգրացիոն ցանկությունների խթանմամբ։
- Բարձրագույն կրթությամբ մասնագետների «գերարտադրությունը» տեղի է ունենում որակյալ բանվորական աշխատուժի թերարտադրության հաշվին։
- Մյուս կողմից պատրաստվում են ցածր գիտելիքներով և բարձր ամբիցիաներով դիպլոմավորված մասնագետներ, ովքեր, պահանջված չլինելով տնտեսության կողմից, իրենց մեջ որոշակի դժգոհություն են կուտակում։

## 7. Մշակութային ենթասեփական գործություններ

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են հայաստանի երիտասարդության մշակութային դիրքորոշումների մի խնդիր՝ ասդեկտներ, որոնց բվում են՝

1. Հաղորդակցական ունակությունները, այդ թվում՝
  - 1.1. Անգվական կողմնորոշումները,
  - 1.2. Տեղեկատվական տեխնիկայի առկայությունը,
  - 1.3. Տեղեկատվական տեխնիկայից օգտվելու ունակությունները,
2. Ժամանցի առանձնահատկությունները,
3. Ենթամշակութային ժիղերը:





## Հաղորդակցական ունակություններ

Հայաստանի երիտասարդության հաղորդակցական ունակությունների հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են օտար լեզուների գերակայությունները, դրանց իմացության մակարդակը, ժամանակակից հաղորդակցական տեխնիկայի (համակարգիչ և բջջային հեռախոս) առկայությունը, հաղորդակցական տեխնիկայից օգտվելու հմտությունները: Այս բնութագրերի միասնական դիտարկումը պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպիսին կարող են լինել Հայաստանի հասարակության մշակութային կողմնորոշումների փոփոխության միտումները:


### Լեզվամշակութային կողմնորոշումներ

Հայաստանի երիտասարդների լեզվական կողմնորոշումների ուսումնասիրության համար կիրառվել է հետևյալ հարցը. «Դայերենից բացի՝ ո՞ր երկու լեզուներին պետք է տիրապետի հայ երիտասարդը: Նշեք առաջին և երկրորդ լեզուներն ըստ առաջնահերթության»: Երիտասարդների 57.4%-ը որպես կարևորությամբ առաջին լեզու նշել է ուստերենը, իսկ 41.5%-ը՝ անգլերենը: Այլ լեզուների նշումները կազմել են ընդամենը 1.1% (Գծապատկեր 87. և Գծապատկեր 88.): Երկրորդ լեզվի նշումներում ռուսերենը և անգլերենը «փոխում են» իրենց տեղերը. անգլերենը՝ որպես երկրորդ կարևոր լեզու, նշել է երիտասարդների 53.8%-ը, իսկ ուստերենը՝ 35.0%-ը: Եվ նորից որևէ այլ լեզու էապես «չի մրցակցել» ռուսերենի և անգլերենի հետ:

Դարձ է նշել, որ ռուսերենի և անգլերենի գերակայությունները տարբերվում են միայն ուսանողության շրջանում: Ուսանողների 58.9%-ը որպես իր կարևորությամբ առաջին լեզու նշել է անգլերենը, իսկ 39.9%-ը՝ ռուսերենը:


Այսպիսով՝ Հայաստանի ապագա հասարակության մշակութային դիրքորոշումներն ուղղված են դեպի անգլախոս տարածքները (առանձին հարց է, թե այդ դիրքորոշումները կյանքի կոչելու համար ինչպիսին են նրանց փաստացի ունակությունները):

87. «Հայերենից բացի՝ ո՞ր լեզուներին դեմք է տիրապետի հայ երիտասարդը», 1-ին ընտրություն:




Ոռուսերենի՝ որպես իր գերակայությամբ առաջին օտար լեզվի տարածվածությունն ամենամեծն է զյուղական երիտասարդության շրջանում՝ 64%:

88. «Հայերենից բազի՝ ո՞ր լեզուներին ուսի՞ և իրավեսի հայ երիտասարդը», 2-րդ ըստություն:



89. «Հայերենից բազի՝ ո՞ր լեզուներին ուսի՞ և իրավեսի հայ երիտասարդը»:




Այսուամենայնիվ, որպես իր նշանակությամբ կարևոր օտար լեզու առաջին և երկրորդ նշումների ընդհանուր քանակով անգլերենը մի փոքր գերազանցում է ռուսերենին (Գծապատկեր 89.): Այդ տեսակետից երրորդ տեղում է ֆրանսերենը՝ 2.7%:




## Տեղեկատվական ռեսուրսներ

Հայաստանի երիտասարդությունն ունի տեղեկատվական ռեսուրսներով բարձր ապահովածություն: Իրենց տաճը համակարգիչ ունի նրա 54.6%-ը, իսկ ինտերնետին միացված համակարգիչներ՝ 47.1%-ը: Երիտասարդների 7.7%-ի ընտանիքներում առկա է 2 կամ ավելի համակարգիչ (Գծապատկեր 90. և Գծապատկեր 91.):

### 90. Համակարգիչների բանակը տաճ:



### 91. Բնտերնետին միացված համակարգիչներուն բանակը:



Բջջային հեռախոս ունի երիտասարդների 99.6%-ը, տեխնիկապես ինտերնետին միանալու հնարավորություն ունեցող բջջային հեռախոս՝ 95.9%-ը (Գծապատկեր 92.):

Տաճը մալուխային հեռուստատեսություն ունի երիտասարդների 26.6%-ը, իսկ արբանյակային ալեհավաք՝ 36.9%-ը (Գծապատկեր 93.):

## Հաղորդակցական ունակություններ

Ուսերենի իմացության մակարդակը նշանակալի չափով գերազանցում է անգլերենին: Հայաստանի երիտասարդների 37.7%-ն անգլերեն չգիտի (Գծապատկեր 94.):<sup>27</sup>

Ուսերեն «գերազանց» գիտի (որպես ինքնազնահատական) երիտասարդների 13%-ը, իսկ անգլերեն՝ 5%-ը:<sup>28</sup> Ուսերեն «լավ» գիտի երիտասարդների 34%-ը, իսկ անգլերեն՝ 12.9%-ը:


Համակարգիչների օգտագործման սեփական հմտությունները «գերազանց» է գնահատել երիտասարդների 9.4%-ը, իսկ ինտերնետի օգտագործումը՝ 15.6%-ը: Համակարգիչ և ինտերնետ գործածել չգիտի երիտասարդների միայն 15.1%-ը (Գծապատկեր 95.):

Ծառ բարձր է ինտերնեխիվ կերպով ինտերնետ օգտագործող երիտասարդների քանակը: Անեն օր կամ շաբաթական մի քանի անգամ համակարգչային ինտերնետից օգտվում է երիտասարդների 65.4%-ը (Գծապատկեր 96.):


27 Այս ցուցանիշը արտացոլում է նաև հանրակրթական դպրոցներում անգլերենի դասավանդման որակը, քանի որ դպրոցների բացարձակ մեծամասնությունում անգլերենը դասավանդվում է որպես օտար լեզու:

28 Հայերենի սեփական իմացությունը «գերազանց» է գնահատել երիտասարդների 40%-ը:


**92. Քջային հեռախոսով ինտերնետի հասանելիությունը:**




**93. Մալուխային և արքանյակային հեռուստանորդյան առկայությունը:**



**94. Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների իմացության մակարդակը:**



**95. Համակարգչին և ինտերնետի ժիաղացելու մակարդակը:**




Գծապատկերների հորիզոնական առանցքի վրա նշված թվերի վերծանումը.

1. Երիտասարդների քանակը, ովքեր օգտվում են համակարգչային ինտերնետից,
2. ...կարդում են մասնագիտական գիրք կամ ամսագիր, այդ թվում՝ էլեկտրոնային տարրերակով (ինտերնետով),
3. ...կարդում են ժամանցային լրագիր կամ ամսագիր, այդ թվում՝ էլեկտրոնային տարրերակով (ինտերնետով),
4. ...կարդում են քաղաքական-հասարակական լրագիր կամ ամսագիր, այդ թվում՝ էլեկտրոնային տարրերակով (ինտերնետով),
5. ...կարդում են գեղարվեստական գիրք, այդ թվում՝ էլեկտրոնային տարրերակով (ինտերնետով):



**96. Բնտերնետից օգտվելու նղատակները:**

...ամեն օր կամ շաբաթը մի քանի ամգամ



Վարքագծային բաղադրիչի համարը

Շատ բարձր է նաև բջջային հեռախոսով ինտերնետից օգտվող երիտասարդների թիվը՝ 53.1% (Գծապատկեր 97.):

